

«ՆՈՐԱՎԱՆՔ» ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ ՀԻՄՍԱԴՐԱՄ

ՄՐԵՐ ԾԱՇԳԵԼՂՅԱՆ

ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ

ՀԱՍԿՎՑՈՒԹՅՈՒՆԸ
ԷՈՒԹՅՈՒՆԸ
ԶԵՎԱՎՈՐՈՒՄԸ
ԱՌԱՋԱՆԱԳԵՐԹՅՈՒՆՆԵՐԸ

1. Ազգային անվտանգություն հասկացության ընդհանուր բնութագիրը

Ժամանակակից աշխարհում ազգային անվտանգության խնդիրը ազգային քաղաքականության կերտման և ազգային զարգացման համար դառնում է հիմնարար: Բազմաթիվ երկրներ, դեկավարելով իրենց քաղաքական համակարգը, առավել մեծ ուշադրություն են դարձնում այդ համակարգի անվտանգությանը՝ վերջինս դիտարկելով որպես անվտանգություն-կայունություն-զարգացում եռամիասնական համակարգի հիմքային բաղկացուցիչ:

1.1 Ազգային անվտանգության սահմանումը

Տարբեր մասնագետներ տարբեր սահմանումներ են տալիս ազգային անվտանգության երևույթին: Այս բոլոր սահմանումները կրում են քաղաքական փիլիսոփայական, քաղաքական-տեսական և պրակտիկ բնույթ: Խնդիրն այն է, որ անվտանգության հիմնախնդիրը միաժամանակ և՛ տեսական խոշոր նշանակություն ունեցող հիմնախնդիր է, և՛ անմիջականորեն առնչվում է քաղաքական, պետության կառավարման և գործառնության պրակտիկայի հետ՝ այսպիսով հանդիսանալով բարդ համալիր երևույթ:

Ազգային անվտանգություն հասկացությունը սահմանելու համար նախևառաջ պետք է ընկալել տվյալ երևույթի ծավալը: Բացի այդ, կարևորագույն հիմնախնդիրներից է ազգային անվտանգության ուղղվածությունը:

Երբեմն ազգային անվտանգությունը սահմանում են որպես ազգային արժեքների, ազգային կենսակերպի և գոյապահպանության, ինչպես նաև զարգացման նկատմանը սպառնալիքների բացակայություն:

Սակայն սահմանումը կարելի է դիտարկել որպես պասսիվ ուղղվածության սահմանում: Զուտ տեսության դիտանկյունից մենք կարող ենք ընդունել տվյալ մոտեցումը, սակայն եթե տեսությունը փորձում ենք համադրել քաղաքական համակարգերի կառավարման ժամանակակից տեխնոլոգիաների հետ, պարզ է դառնում, որ ոչ մի երկիր իր ազգային անվտանգությունը չի դիտարկում միայն որպես պաշտպանություն առկա սպառ-

նալիքներից: Ազգային անվտանգությունը դիտարկում են որպես սպառնալիքները կանխարգելող մեխանիզմ: Այլ կերպ ասած՝ անվտանգությունը ենթադրում է նաև կանխարգելիչ գործողություններ: Այս մոտեցման հիման վրա է նաև մշակվում պաշտպանության և ազգային անվտանգության համակարգերի տարբերությունը:

Հավանաբար կարելի է, վերոնշյալը հաշվի առնելով, անվտանգությունը դիտարկել որպես համրային համակարգի գերակայություն, որը դրդում է վերջինիս իրականացնել ակտիվ գործողություններ՝ պահովելու համար իր պաշտպանվածությունը և զարգացման հնարավորությունները՝ ի դեմս արտաքին և ներքին սպառնալիքների:

Եթե փորձում ենք անվտանգության խնդիրը դիտարկել Մասլոուի պահանջնունքների հիերարխիայի տեսության պրիզմայով (չնայած վերջինս մշակված է անհատի վարքագիծը վերլուծելու համար) պարզ է դառնում, որ անվտանգությունը համակարգի հիմնարար և միաժամանակ ոչ թե պասսիվ, այլ ակտիվ գերակայությունն է: Կարծում ենք առավել հաջող սահմանումներից կարելի է ընդունել ռուս մասնագետ Մ. Ալեսկովի սահմանումը, որը ներառում է և գիտարանական, և համակարգային տեսության վրա հիմնված մոտեցումներ: Անվտանգության սահմանման հիմնախնդիրը լուծելու նպատակով «...անվտանգությունը կարելի է դիտարկել մի երևույթ, որը նոյնական է համակարգի հոմոստացին, որի տակ հասկանում ենք դիմանմիկ հավասարակշռության տարատեսակ, ինչը հատուկ է բարդ ինքնակարգավորվող համակարգերին և համակարգի գոյապահպանության համար անհրաժեշտ չափորոշչների ապահովում թույլատրելի սահմաններում»¹: Այս սահմանման մեջ փաստորեն շեշտվում են անվտանգության դիմանմիկ և կանխարգելիչ հատկանիշները, որոնց հիման վրա կարելի է ասել, որ անվտանգության երևույթը սպառնալիքների դեմ ակտիվ պայքարն է: Այդ ակտիվությունը ենթադրում է սպառնալիքների:

- վերհանում,
- կանխարգելում,
- թուլացում,
- հակադարձում,
- վերացում:

Այսպիսով, անվտանգությունը դիմանմիկ երևույթ է՝ անհրաժեշտ համակարգի գոյապահպանության և զարգացման համար:

1.2 Ազգային անվտանգության գաղափարի գարզացումը քաղաքական մտքի պատմության մեջ

Եվ իհն աշխարհում, և միջին դարերում, և հատկապես նոր ու նորագույն ժամանակաշրջանում անվտանգության խնդիրը դիտարկվել է որպես կարևորագույն նպատակ և համակողմանիրեն ուսումնասիրվել է:

Բնականաբար, անվտանգության հասկացությունը դրոշակի զարգացում, գենեզիս է ապրել, սակայն հիմքում անվտանգության երևույթի ընկալումը մնում է նույնը, այն է՝ ինքնապաշտպանություն և սպառնալիքի բացակայություն:

Ներևս իհն չինական քաղաքական մտքի պատմության ընթացքում պետության ներքին անվտանգության և արտաքին անվտանգության ապահովության մեխանիզմների վերաբերյալ մշակվել են մի շարք տեսություններ: Ներքին անվտանգության խնդիրները քննարկվել են հատկապես լեզվատների աշխատություններում՝ պետության կառավարելիության և հասարակության նկատմամբ վերահսկողության համատեքստում: Այս գաղափարների մի մասը որոշակի տոտալիտար բնույթ էին կրում, սակայն պետության ներքին կայունության խնդիրը, որը ներքին անվտանգության կարևորագույն բաղկացուցիչ էր, ըստ լեզվատների, գերակայող նշանակություն ուներ¹:

Արտաքին անվտանգության խնդիրները Յին Չինաստանում հիմնականում մշակվում էին ռազմական տեսության և ռազմական ռազմավարության (այս հասկացությունները, որպես կանոն, Յին Չինաստանում չէին տարբերակվում) շրջանակներում²: Այս ավանդույթը, փաստորեն, պահպանվել է մինչև երկրորդ համաշխարհային պատերազմի ավարտը: Օրինակ, Բրիտանական կառավարության կողմից պատերազմի համար անհրաժեշտ ռեսուլսների համահավաքի գործընթացը կոչվում էր «Մեծ ռազմավարություն»**, իսկ 50-ական թվականներին արդեն կիրառվում էր երկու տերմին՝ մեծ ռազմավարություն և ազգային անվտանգություն (երկրորդ տերմինի տարածումը հիմնականում կապված է ամերիկյան ռազմավարական մտքի զարգացման և գերակայության հետ՝ եվրոպականի և մասնավորապես բրիտանականի նկատմամբ):

Արիստոտելը հասարակության կառավարման մեթոդների վերաբերյալ իր գաղափարների հիմքում օգտագործում էր քաղաքացիների անվտան-

գության չափանիշը՝³:

Բենիդիկտ Սպիրիոնան քաղաքացիական վիճակի հիմնական նպատակ սահմանում էր «խաղաղությունը և կյանքի անվտանգությունը»⁴:

Ազգային անվտանգության տեսության գիտական, և ավելի լայն՝ փիլիսոփայական արմատներն են Թոնա Յորսի աշխատությունները, որը պետությունը համարում էր միջազգային հարաբերությունների հիմնական սուբյեկտ: Վերջինս պաշտպանում է սեփական քաղաքացիների շահերը, որոնք իրենց անվտանգության հիմնախնդիրները վստահել են նույն պետությանը, որն իր հերթին այդ անվտանգության պաշտպանության համար կարող է օգտագործել միայն իր ուժերը: Այս գաղափարները⁴, ինչպես նշում է ամերիկացի Ջաֆտեն Դորնը, միջազգային հարաբերությունների ռեալիստական դպրոցի գարգացման հիմքը դարձան, որի շրջանակներում էլ առավել մեծ չափով զարգացավ ազգային անվտանգության տեսությունը: Թոնա Յորսն իր աշխատություններում պետության և պետական քաղաքականության հիմնական խնդիր համարում էր պետության, հասարակության և անձի անվտանգությունը միաժամանակ⁵:

Ըստ Ժան Ժակ Ռուսսոյի՝ ինքնապաշտպանության նկատմամբ հոգատարությունը պետք է լինի պետության կարևորագույն հոգատարությունը⁶:

Բավականաչափ պարզ երևում է, որ ազգային անվտանգության տեսությունը սկսել է ծևավորվել նոր պատմության ընթացքում՝ արևմտաեվրոպական երկրներում: Այս օրինաչափությունը կարելի է բացատրել հետևյալով:

• այս ժամանակաշրջանում, փաստորեն, սկսեցին ծևավորվել ազգային պետություններ.

• մշակվեցին հասարակական դաշինքի, միջազգային հարաբերությունների, միջազգային իրավունքի, քաղաքացիական հասարակության, մարդու իրավունքների, ժողովրդավարության իշխանությունների բաժանման, հասարակական խաղաղության և հասարակական պատերազմի գաղափարները, որոնք մինչ այսօր շարունակում են մնալ ժամանակակից արևմտյան և ոչ միայն արևմտյան պետությունների ծևավորման հիմք:


Սա ապացուցում է, որ ազգային անվտանգությունը և ազգային անվտանգության տեսությունը սերտորեն փոխկապակցված են ժամանա-

կակից քաղաքագիտական և պետականագիտական տեսությունների հետ, ու վերջիններիս համընթաց զարգացումը կարևոր գործոն պետք է լինի ներկայումս պետությունների, ազգերի և հասարակությունների, ինչպես նաև անհատների համակողմանի զարգացման ու ինքնապաշտպանության համար:

Մողկալական հոգեբանության մասնագետ Աբրահամ Մասլուն, ուսումնասիրելով մարդկանց պահանջնունքները, մշակել է պահանջնունքների հիերարխիայի համակարգը կամ «Մասլունի պահանջնունքների բուրգը»:

Մասլունի բուրգը

1. Սնունդ (Փիզիոլոգիա)
2. Անվտանգություն
3. Ներգրավվածություն խմբում
4. Հասարակական ճանաչում շրջապատի կողմից
5. Ինքնախրացում



Ինչպես երևում է գծագրից, անվտանգության պահանջնունքը հիմնարար է մարդկանց պահանջնունքների շարքում: Այս մոտեցումը համամանորեն կիրառելի է և՝ ծեռներեցության կառավարման, և՝ մարդկային գործոնի զարգացման, և՝ հասարակական կառավարման ու զարգացման իրականացման ընթացքում: Յանրային զարգացման և հանրային անվտանգության կոնցեպցիաների մշակման ընթացքում Մասլունի բուրգը կարող է դիտարկվել որպես հիմնարար տեսություններից մեկը:

XX դարում ազգային անվտանգության տեսությունը հիմնականում զարգացավ ամերիկյան մասնագետների աշխատանքների շնորհիվ՝ հատկապես երկրորդ համաշխարհային պատերազմից հետո: Սա պայմանավորված է այդ ժամանակաշրջանում Եվրոպայում տեղի ունեցած ավերածություններով և արդյունաբերության, գիտության, կրթության անկանության, գաղափարախոսական խիստ կոնֆլիկտով և միաժամանակ վակուումով: Այնպիսի ամերիկյան մասնագետներ, ինչպիսիք են Դ. Ստեյնբրունները, Դ. Կառլֆիմանը, Ս. Լին Զոնսը, Տ. Մորանը, Ռ. Կոխաննեն, Դ. Նայը, Դ. Մեֆյուսը, Ն. Բրաունը, Ու. Լիպմանը, Ա. Ուլիֆերոսը և ուրիշները, անդրադարձել են ազգային անվտանգության հիմունքներին, ինչպես նաև այս կամ այն ասպեկտներին:

Ֆրանսիացի մասնագետները ազգային անվտանգության կոնցեպցի-ային անդրադարձել են ռազմավարության, պետական կառավարման և ռազմական ու միջազգային քաղաքականության տեսության լույսի ներքո: Ազգային անվտանգության վերաբերյալ աշխատություններ ունեն ֆ. Դիոն, Ե. Դենեսեն, Ռ. Արոնը և այլ:

Վերջին տարիներին ազգային անվտանգության խնդիրներին ավելի ու ավելի մեծ չափով անդրադառնում են ռուս մասնագետները, օրինակ՝ Վ.Ի.Յարոչկինը, Ա.Վ.Մակենը, Օ.Ա.Կոլոբովը, Ա.Գ.Մակարիչևը, Օ.Օ.Խոխլիշևն և ուրիշներ:

1.3 Ազգային անվտանգությունը լայն եւ նեղ առումներով

Կարելի է առանձնացնել անվտանգության ներ և լայն սահմանումները:

Ըստ անվտանգության ներ սահմաննան, ազգային անվտանգությունը ներառում է տարածի պաշտպանություն, արտաքին քաղաքականություն, հետախուզություն և հակահետախուզություն: Ինչպես տեսնում ենք, ազգային անվտանգության ներ սահմանումը կենտրոնացված է համակարգի և արտաքին աշխարհի հարաբերությունների ոլորտում:

Ներկայումս առավել մեծ բվով քաղաքական գործիչների և քաղաքագետների տեսակետներում սկսում է գերակայել անվտանգության ընդլայնված սահմանումը, որը ներառում է տարածի և ազգաբնակչության անվտանգության պաշտպանություն, ներքին կարգ ու կանոնի պաշտպանություն, սոցիալական կառույցների և ինստիտուտների պաշտպանություն, տնտեսական համակարգի զարգացող գործառնության ապահովում, ապրելակերպի արժեքների նույնացման և քաղաքական ինստիտուտների պաշտպանություն:

Քաղաքագիտական տեսանկյունից վերջին սահմանումներն, ըստ էության, համընկնում են հանրային համակարգերի գործառնության և կենսագործունեության գերակայունություններին, ինչը և քաղաքական համակարգերի կառավարման հիմնական հրամայականն է:

Մենք կարծում ենք, որ բարդ և զարգացող աշխարհում ազգային անվտանգություն երևություն անհրաժեշտ է դիտարկել լայն տեսանկյունից, քանի որ անվտանգության համալիր բնութագիրը համապատասխանում է

քաղաքական համակարգերի բարդ և զարգացող բնույթին (խոսելով քաղաքական համակարգերի մասին՝ տվյալ դեպքում նկատի չունենք պետությունները):

1.4 Ազգային անվտանգության բաղկացուցիչները

Ազգային անվտանգությունը, լինելով բարդ և համալիր երևույթ, ինչպես արդեն նշել ենք, ունի բազմաթիվ բաղկացուցիչներ:

Միաժամանակ, ըստ ներկայիս մի շարք մասնագետների՝ առաջնային է նոոսֆերայի անվտանգության խնդիրը, քանի որ վերջինս հասարակական կյանքի և մարդկային գոյության անվտանգության համար բազմային երևույթ է: Նոոսֆերայի անվտանգությունը ենթադրում է, որ պետք է պահպանվի կյանքի միջին համաշխարհային մակարդակը, միաժամանակ ապահովվեն բնական և կենդանական աշխարհի գոյապահպանության ու զարգացման անհրաժեշտ պայմանները:

Ազգային անվտանգության բաղկացուցիչների առանձնացումն անհրաժեշտ է իրականացնել մարդ-հասարակություն-պետություն-միջազգային համրություն քառմիասնական մեխանիզմի հիման վրա, չնայած, մինչ այժմ առանձնացնում են մարդ-հասարակություն-պետություն եռամիասնական համակարգը, ինչը, սակայն, գլոբալացման գնացող աշխարհում չի կարող արտացոլել ազգային անվտանգության բոլոր կողմերը:

Ազգային անվտանգության բաղկացուցիչներն են՝

1. ռազմական,
2. քաղաքական,
3. տնտեսական,
4. ժողովրդագրական,
5. սոցիալական,
6. մշակութային,
7. տեխնոլոգիական,
8. բնապահպանական,
9. տեղեկատվական:

Ազգային անվտանգության հիմնախնդիրը դիտարկելիս անհրաժեշտ է առանձնացնել հետևյալ մակարդակները՝

1. աշխարհաքաղաքական, աշխարհառազմավարական, աշխարհատնտեսական,
2. տարածաշրջանային,
3. պետական,
4. տարածքային,
5. խմբային,
6. անհատական:

Առավել հստակ ներկայացնելու համար անվտանգության բաղկացուցիչների և մակարդակների հարաբերակցությունը կարելի է կիրառել մատրիցային մոտեցում: Տվյալ դեպքում յուրաքանչյուր մակարդակին կարող են համապատասխանել ազգային անվտանգության որոշակի ոլորտներ: Միաժամանակ, պարտադիր չէ, որ յուրաքանչյուր մակարդակին համապատասխանեն բոլոր ոլորտները: Այս ոլորտների և մակարդակների հարաբերակցությունը և հանդես են գալիս որպես ազգային անվտանգության բաղկացուցիչներ: Այսինքն՝ եթե խոսում ենք ազգային անվտանգության բաղկացուցիչների մասին, փորձում ենք ներկայացնել, թե ո՞ր մակարդակում հասարակական կյանքի ո՞ր ոլորտի անվտանգության ապահովման խնդիրն է դրված:

Ազգային անվտանգության բաղկացուցիչները դասակարգելիս գերադասելի է ցուցաբերել ծավալային և ոլորտային մոտեցումների սկզբունքը, որը կիրառվել է նաև պրոֆեսոր Ի. Վ. Յարոչկինի աշխատություններում⁷: Չափազանց հետաքրքիր և համակարգված է այն փաստը, որ անվտանգության հիմնարար ոլորտ դիտարկվում է նոոսֆերան: Վերջինիս անվտանգությունը ենթադրում է մարդկային տեսակի գոյապահպանություն և երկրի վրա կյանքի համար անհրաժեշտ պայմանների պաշտպանություն: Խնդիրն այն է, որ վերջին տարիներին տեխնածին գործոնների գարգացումը և գլոբալացման գործընթացները լուրջ հիմնախնդիրներ են ստեղծում նոոսֆերայի գոյության համար: Նոոսֆերայի անվտանգությունը, փաստորեն, հարակից է գլոբալ անվտանգության հիմնախնդիրն, սակայն միաժամանակ նոոսֆերային մոտեցումը պակաս տեխնոլոգատական և ուսումնական է:

Աշխարհաքաղաքական և աշխարհառազմավարական անվտանգությունը ենթադրում է աշխարհում ուժերի հարաբերակցության և համաշխարհային մակարդակով ընդհանուր խաղաղության պահպանում, հա-

մաշխարհային ուժային կենտրոնների հզորության հավասարակշռման ապահովում, սեփական տարածքներում եթիկ միավորների կողմից սեփական բարձրագույն իշխանության կազմակերպման ձևերի ազատ ընտրություն, ազգերի կողմից սեփական շահերի պաշտպանության լեգիտիմ մեխանիզմներ, ազատ համագործակցություն, փոխադարձ հարգանքի հիման վրա աշխարհառազմավարական խաղի կանոններ և այլն:

Աշխարհատնտեսական տեսանկյունից անվտանգությունը ենթադրում է համաշխարհային տնտեսական ճգնաժամների հնարավորության նվազեցում, հումանիստական գլոբալ շուկայի առաջացում, ֆինանսական, նյութական և ինտելեկտուալ հոսքերի կանոնակարգում, տարրեր ազգերի տնտեսական զարգացման միջև հնարավոր համամասնություն, համաշխարհային ֆինանսատնտեսական կազմակերպությունների (Համաշխարհային բանկ, Արժույթի միջազգային հիմնադրամ) գործունեության ձևի և խնդիրների փոփոխություն ու դրանց համապատասխանեցում և այլն:

Տարածաշրջանային անվտանգությունը կարելի է սահմանել որպես տարածաշրջանում բնակվող ազգերի և ժողովուրդների, գործող միջազգային կազմակերպությունների կենսական շահերի նկատմամբ սպառնալիքի բացակայություն: Տարածաշրջանային անվտանգությունը պայմանավորված է ուժերի հարաբերակցության պահպանմամբ, տարածաշրջանի բոլոր երկրներում խաղաղության մշակույթի համաշափ արմատավորմամբ, աշխարհաքաղաքական կենտրոնների կողմից տարածաշրջանային կայունության ապահովմամբ, տարածաշրջանային քաղաքական դիմանիկայով և այլն:

Տարածաշրջանային անվտանգության համակարգի գործող անձինք են տարածաշրջանային պետությունները, եթեկա խմբերը, տարածաշրջանային և միջազգային կազմակերպությունները, աշխարհի ուժային կենտրոնները:

Քանի որ աշխարհի ներկայիս միակ գերտերության՝ ԱՄՆ-ի, ինչպես նաև մեծ պետությունների ազգային անվտանգության հայեցակարգերում գերակայում է տարածաշրջանային մոտեցումը, տարածաշրջանային անվտանգության համակարգերի դերն ու նշանակությունը գլոբալ անվտանգության և առանձին պետությունների անվտանգության ապահովման գործում անհամենատ բարձրացել է վերջին տարիներին, ինչը անհ-

րաժեշտ է հաշվի առնել նաև Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության համակարգն ստեղծելու ընթացքում:

Պետական անվտանգությունը որպես երևույթ ընդլայնված է, և քանի որ ներկայումս, ու դեռևս երկար ժամանակ, ազգերը կազմակերպվում են պետության ձևով, պետական անվտանգությունը է և լինելու է անվտանգության կարևորագույն բաղկացուցիչներից մեկը: Պետական անվտանգությունը, ըստ Էության, ներառում է այնպիսի ոլորտներ, ինչպիսիք են տնտեսությունը, քաղաքականությունը, մշակույթը, սոցիալական ոլորտը, ընդերքը, բնությունը և գյուղատնտեսությունը, ինֆորմացիոն և էներգետիկ դաշտերը ու այլն:

Պետության անվտանգության մասին խոսելիս անհրաժեշտ է առանձնացնել անվտանգությունը նեղ և լայն առումներով: Լայն առումով պետական անվտանգությունը նշանակում է տարածքի, ազգաբնակչության և կառավարման համակարգի նկատմամբ սպառնալիքի ու վտանգի բացակայություն: Տվյալ դեպքում մենք կարող ենք խոսել նաև պետության՝ որպես քաղաքական համակարգի անվտանգության մասին: Նեղ առումով պետական անվտանգությունը ենթադրում է պետական կառավարման համակարգի նկատմամբ սպառնալիքի և վտանգի բացակայություն: Քաղաքական տեսանկյունից մենք կարող ենք խոսել պետական համակարգի անվտանգության մասին:

Պետական համակարգի անվտանգությունը նշանակում է պետական ինստիտուտների հստակ գործունեություն, այդ ինստիտուտների միջև կոռորդինացիա, տեղեկատվության հստակ շրջապտույտ և որոշումների ընդունման գործող մեխանիզմ: Կազմակերպչական գործընթացների գերակայություն ֆլուկտուացիոն գործընթացների նկատմամբ, իշխանության մարմինների կողմից ռազմավարական կառավարում և իշխանության բալանս, պետական կառավարման համակարգի ինքնարդիկանացման ունակություն, պետական կառավարում-ժողովուրդ կապի առկայություն:

Քաղաքական համակարգի անվտանգությունը անհրաժեշտ է դիտարկել հասարակական կյանքի ոլորտների անվտանգության պրիզմայով:

Քաղաքական անվտանգությունն առաջին հերթին նշանակում է քաղաքական ռեժիմի անվտանգություն և, կախված նրանից՝ տվյալ պետությունը քաղաքական ինչպիսի ռեժիմ ունի, ենթադրում է հասարակության

քաղաքական կառավարում, ռեժիմի լեգիտիմություն, քաղաքական խաղաղության գերակայություն և կոնֆլիկտների լուծնան ու կանխարգելման գործող մեխանիզմ, կայուն ինստիտուտներ, էլիտայի շրջապտույտի և ռեկրուտավորման այնպիսի մեխանիզմի առկայություն, որը միաժամանակ թե՛կապահովի համակարգի զարգացող գործառնությունն ու արդիականացնը, թե՛ կիամապատասխանի քաղաքական ու սոցիալական, մշակութային մեխանիզմներին և այլն:

Քաղաքական անվտանգության խնդիրը առավել քան կարևոր է, քանի որ, ինչպես նշում են բազմաթիվ հեղինակներ (Ն. Սաքիավելի, Պ. Սորոկին և այլն), ազգային անվտանգությունն ինքը քաղաքական բնույթ է կրում և ազգային քաղաքականության կերտման գերակայությունն է: Սակայն դա չի նշանակում, որ քաղաքականությունը և անվտանգությունը լիովին համընկնում են:

Ուզմական անվտանգությունը հանդես է գալիս որպես պետության տարածքի, ազգաբնակչության պաշտպանության ունակություն արտաքին ռազմական սպառնալիքներից և վտանգներից: Ուզմական անվտանգությունը ենթադրում է պետության սահմանների անխախտելիություն, հարձակման դեպքում արագ և հաղթական պատերազմի ներուժ, սեփական պետության սահմաններից դուրս ռազմական հակամարտություններում նպատակների իրականացում և այլն: Գերակայողը, իհարկե, պետության ազգաբնակչության և տարածքի պաշտպանությունն է: Մինչև 50-ական թվականները անվտանգությունը և պաշտպանությունը նույնացվում էին: Ակարեկչության, թմրադեղերի համաշխարհային առևտության սահմանների բացման հետ միաժամանակ ռազմական անվտանգությունը և պաշտպանությունը նոր բովանդակություն են ստանում: Սա կապված է զինված ուժերի հաճախակի կիրառման հետ, վերջիններիս համար ոչ սովորական գործառույթներ իրականացնելիս՝ թմրադեղերի, ներգաղթի, կազմակերպված համաշխարհային հանցագործ խմբերի դեմ պայքար և այլն: Ներկայումս արևմուտքում լուրջ տեսական և կիրառական բնույթի տարածայնություններ կան պաշտպանության և անվտանգության հարաբերակցության շուրջ: Կա ևս մեկ խնդիր. արդյոք ռազմական անվտանգությունը կարելի՞ նույնացնել պաշտպանության հետ, թե՞ ոչ:

Տնտեսական անվտանգությունը ենթադրում է տնտեսական համակարգի անխափան գործունեություն, ռեսուրսների մատակարարման և

կոմունիկացիայի հստակ գործառնություն, հավասարակշռություն շուկայի ազատականացման և տնտեսական խաղի կանոնների կանոնակարգման միջև, պետության դերի և նշանակության հստակեցում, տնտեսական դիմանմանի գերակայություն ազգային մշակույթում:

90-ական թվականներից հետո գլոբալ անվտանգության ապահովման նպատակով ավելի ու ավելի հաճախակի է դառնում միջազգային հանրության կողմից ճնշման ոչ ռազմական միջոցների կիրառումը, և այդ միջոցներից առավել կարևոր են տնտեսական լծակները: Նշվածը երբեմն անվանում են տնտեսական պետականակերտում: Տնտեսական հիմնական միջոցներ են առևտրային քաղաքականությունը, ֆինանսական և նակրոտնտեսական քաղաքականությունը:

Բարդությունն այն է, որ ներկայումս գլոբալացման ընթացքում նույնիսկ դժվար է դառնում խոսել ազգային տնտեսության մասին: Նույնիսկ մեծ երկրներն են խոցելի, իսկ փոքր երկրները՝ առավել ևս: Այդ է ապացուցում հետևյալ փաստը. 90-ականների կետերին հայտնի ֆինանսիստ և բարերար Զորօ Սորոսի կողմից ֆինանսական էքսպանսիա իրականացվեց բրիտանական ֆունտ ստեղլինգի նկատմամբ՝ նպատակ հետապնդելով բրուսայական խաղի ընթացքում խոշոր շահույթներ ձեռք բերել: Էքսպանսիայի արդյունքում ֆունտ ստեղլինգի, որը Եվրոպայի ամենակայուն դրամն է եղել դարեր շարունակ, դիրքերը թուլացան, և այն մեկուկես տարով դադարեց ակտիվ «խաղացող» հանդիսանալ Եվրոպական դրամական տարածքում:

Սոցիալական անվտանգությունը հանդես է գալիս որպես քաղաքացիական և սոցիալական խաղաղություն: Այն ենթարում է հասարակության ներսում սոցիալական բեկեռացման բացակայություն, հասարակության խիստ ստրատիֆիկացիայի բացակայություն, սոցիալական միայն «կառուցողական» հականարտությունների առկայություն, սոցիալական համաձայնության ու գործընկերության մշակույթի առկայություն և միջին խավի գոյություն:

Սոցիալական անվտանգության կարևորագույն խնդիրներից մեկը սոցիալական հականարտությունների կտրուկ քաղաքականացման և քաղաքական հականարտությունների վերաճնան դեմ պայքարեն է: Պետք է հաշվի առնել, որ ինչպես արևանտյան, այնպես էլ անցումային հասարակություններում սոցիալական հականարտությունների լուծման հնարավո-

րությունը պարփակված է այսպես կոչված «փափուկ» համաձայնողական տեխնոլոգիաների գերակայության՝ պետական իշխանության իրականացման ընթացքում:

Տեղեկատվական անվտանգություն: Այս հիմնախնդիրը վերջին տարիների ընթացքում առավել մեծ չափով քննարկման առարկա է դարձել և գլոբալացման, ինտերնետի զարգացման, ինֆորմացիոն հասարակությունների, ինչպես նաև գլոբալ ինֆորմացիոն հասարակության ձևավորման պայմաններում իր նշանակությամբ հավասարվում է ռազմական, տնտեսական և քաղաքական ոլորտների անվտանգության խնդիրներին: Ինֆորմացիոն և կոմունիկացիոն տեխնոլոգիաների զարգացումը ստեղծում է նոր վիրտուալ աշխարհ, որի անվտանգության համակարգը և գործունեությունն իսկ մերկայումն դեռևս լիովին պարզ չեն: Տարբեր երկրներ և համաշխարհային հանրությունը ներկայումս փորձում են ստեղծել ինչպես պետական, այնպես էլ գլոբալ անվտանգության համակարգեր: Սակայն հիմնախնդիրը դեռևս մնում է բավականաչափ չուտումնասիրված: Ներկայումս գիտական միջավայրում շրջանառության մեջ են դրված այնպիսի հասկացություններ, ինչպիսիք են տեղեկատվական հանցագործությունը, տեղեկատվական պատերազմը և հականարտությունը, տեղեկատվական տարածքը, տեղեկատվական ազդեցությունը, տեղեկատվական գենը և այլն:

Տեղեկատվական անվտանգությունը ենթադրում է տեղեկատվական տարածքի պաշտպանվածություն, տեղեկատվության կիրառում միայն վերջինիս հասցեատերի կողմից և, միայն նպատակային կերպով, տեղեկատվության գաղտնիության ամրոցության և հասանելության պաշտպանվածություն, ռազմական, քաղաքական, տնտեսական, սոցիալական, ժողովրդագրական և տեղեկատվական ու հեռահաղորդակցման կառավարման համակարգերի պաշտպանվածություն: Ներկայումս տեղեկատվական անվտանգությունը սերտորեն առնչվում է հեռահաղորդակցման ոլորտի հետ, և, խոսելով տեղեկատվական անվտանգության մասին, ըստ եռթյան, նկատի ենք ունենում նաև հեռահաղորդակցման ոլորտի անվտանգությունը:

Տեղեկատվական ոլորտի սպառնալիքները կարող են լինել պետության ամբողջ տեղեկատվական և հեռահաղորդակցման համակարգի նկատմամբ և առանձին տեղեկատվական համակարգերի

նկատմամբ: Տեղեկատվական անվտանգությունը կարող է լինել նեղ և լայն իմաստով: Լայն իմաստով տեղեկատվական անվտանգությունը ենթադրում է՝

- տեղեկատվական տարածքի պաշտպանվածություն,
 - տեղեկատվության գաղտնիության անբողջականության և հասանելիության ապահովում,
 - տնտեսվարող օրյեկտների և նրանց կառավարման համակարգերի տեղեկատվական պաշտպանվածություն:
- Նեղ իմաստով տեղեկատվական անվտանգությունը ենթադրում է՝
- համակարգիչների աշխատանքի հուսալիություն,
 - արժեքավոր տվյալների պահպանվածություն,
 - տեղեկատվության պաշտպանվածությունը՝ ոչ իրավասու անձանց կողմից փոփոխություններ կատարելու նկատմամբ,
 - համակարգչային ցանցերի պաշտպանվածություն,
 - էլեկտրոնային փոստի միջոցով նամակագրության գաղտնիության ապահովում:

1.5 Ազգային անվտանգության հիմնախնդիրը պետության անվտանգություն եւ հասարակության անվտանգություն երեւութերի պրիզմայով

Գլոբալ գործընթացների զարգացմանը համընթաց առավել հրատապ է դառնում ազգային անվտանգության հիմնախնդիրը՝

- պետության,
- քաղաքական հասարակության,
- քաղաքացիական հասարակության շրջանակներում, ինչպես և դրանց հարաբերակցության հարցը: Հայաստանի Հանրապետության համար զարգացման ներկայիս փուլում այս հիմնախնդիրը առավել քան կարևոր է, քանի որ պատմության զարգացումն իր այս կամ այն փուլում հայ էրնուին պարտադրել է ինքնակազմավորվել պետության, քաղաքական հասարակության կամ քաղաքացիական հասարակության ձևով: Ստորև նշվածը կարող է վիճահարույց թվալ, սակայն ամենայն հավանականությամբ կարելի է նշել, որ հայկական չորս թագավորությունների, և

առաջին ու երրորդ հանրապետությունների գոյության ընթացքում հայ էրնուը ինքնակազմակերպվել է և՝ պետության, և՝ քաղաքական ու քաղաքացիական հասարակությունների ձևով միաժամանակ: Հայկական երկրորդ հանրապետության (ԽՍՀՄ) գոյության ընթացքում հայ էրնուը ինքնակազմակերպվել է քաղաքական հասարակության ձևով՝ Խորհրդային Հայաստանի տարածքում, և քաղաքացիական հասարակության ձևով՝ սփյուռքի հիմնական գաղթօջախներում:

Պետության անվտանգության հիմնախնդիրը կարելի է ուսումնասիրել՝ ելնելով վերը նշված նոտեցումից՝ ըստ ազգային անվտանգության բաղադրիչների: Քաղաքացիական անվտանգության հիմնախնդիրն անհրաժեշտ է դիտարկել քաղաքացիական հասարակություն-պետություն կոնֆլիկտայնություն-փոխլրացում մեխանիզմի տեսանկյունից և միաժամանակ հաշվի առնելով, որ պետական կառույցների բացակայության ու պետականության վակուումի դեպքում քաղաքացիական հասարակությունն ինքը է իրականացնում անվտանգության ապահովման (ընդ որում՝ տարբեր ոլորտների) գործառույթները: Հայ ժողովրդի պատմության ընթացքում բազմից եղել են այդպիսի ժամանակաշրջաններ: Օրինակ՝ XX դարի սկզբում, ցարական կառավարության ճնշումների պայմաններում, հայկական համայնքները ստեղծեցին ընդհատակյա դպրոցներ և դատարաններ, ընդ որում, վերջիններս լեզվալ չեին, բայց լեզիտիմ էին՝ այսպիսով ստեղծելով ազգային ինքնության նկատմամբ առաջացող սպառնալիքին դիմագրավելու մեխանիզմներ: Ղարաբաղյան պայքարի սկզբնական փուլում ստեղծվեցին ինքնապաշտպանության ջոկատներ:

Ե՛վ քաղաքական, և՝ քաղաքացիական հասարակությունների անվտանգության ապահովման կարևորագույն մեխանիզմները բոլոր բաղկացուցիչների համար հետևյալն են՝

1. այսպես կոչված վաղ ծանուցման և նախազգուշացման համակարգեր,
2. «մերը-օտարը» ճանաչման ինդիկատորային համակարգ,
3. արագ արձագանքման և կանխարգելման համակարգ,
4. պաշտպանության և սպառնալիքի համակարգ:

Պետության և հասարակության միջև կա թափական մեջ տարբերություն. ուժեղ և գործունյա պետության առկայության դեպքում միայն վերջինիս է վերապահված բռնության մենաշնորհ, ընդ որում՝ արտաքին և ներքին սպառնալիքների առկայության դեպքում: Սա նշանակում է, որ

քաղաքացիական հասարակությունը պետք է ստեղծի քաղաքացիական անվտանգության իր մեխանիզմները, որոնք կարող են համադրվել պետական անվտանգության մեխանիզմների, մասնավորապես՝ քաղաքացիական պաշտպանության մեխանիզմների հետ: Յայ էթոսն իր ազգային անվտանգության համակիրը մշակելիս պետք է հաշվի առնի այս հիմնախնդիրը Յայաստանի Յանրապետության, Սփյուռքի և Լեռնային Ղարաբաղի Յանրապետության առկայության պայմաններում: Սա կարևոր խնդիր է և լուրջ ուսումնասիրությունների կարիք է գգում: Յարցադրումները կարող են լինել հետևյալները:

- ինչպիսի՞ն է լինելու ռազմական անվտանգությունը Յայաստանի և Ղարաբաղի համար.
- ինչպիսի՞ն են լինելու տնտեսական անվտանգության մեխանիզմները Յայաստանի, Ղարաբաղի և Սփյուռքի համար.
- որո՞նք են սոցիալական անվտանգության և խաղաղության արդյունավետ մեխանիզմները Յայաստանի և Ղարաբաղի համար.
- ինչպե՞ս դիմագրավել ազգային ինքնության սպառնալիքներին Սփյուռքում.
- ի՞նչ նշանակություն է ունենալու համաշխարհային ինֆորմացիոն տարածքը հայ էթոսի ապագա զարգացման համար, և ինչպե՞ս պաշտպանվել ու հարձակվել այդ տարածքում՝ ներկա սպառնալիքների առկայությամբ և այլն:

Ե՞վ պետությունը, և քաղաքական ու քաղաքացիական հասարակությունները պետք է իրականացնեն երեք խնդիր՝

1. ստեղծել անվտանգության ընդհանուր հայեցակարգ և մշակել անհրաժեշտ մեխանիզմներ.

2. յուրաքանչյուրը ստեղծի իրեն հատուկ մեխանիզմները.
3. համադրել այդ մեխանիզմները սիներգիայի սկզբունքով:

2. Ազգային անվտանգություն եւ պետական կառավարում

2.1 Ազգային անվտանգության հայեցակարգ եւ ազգային անվտանգության դոկտրին (հարաբերակցությունը՝ նմանություններ եւ տարրերություններ)

Ազգային անվտանգության կերտման և իրականացման համար չափազանց կարևոր է աշխատանք տանել տեսական-կիրառական չորս հիմնարար ուղղություններով՝

1. ազգային անվտանգության հայեցակարգի մշակում.
2. ազգային անվտանգության դոկտրինի մշակում.
3. ազգային անվտանգության քաղաքականության կերտում.
4. ազգային անվտանգության ռազմավարության մշակում և իրացում:

Անհրաժեշտ է նշել, որ բոլոր այս ուղղությունները սերտորեն փոխկապակցված են, և, որպես կանոն, դրանք պետք է մշակվեն համալիր մոտեցմամբ: Յամառուս ներկայացնելով բոլոր չորս ուղղությունների սահմանումները՝ կարելի նշել, որ.

1. Ազգային անվտանգության հայեցակարգը կարող է հանդես գալ որպես ազգային շահերի, գերակայությունների և նպատակների, ազգային անվտանգության սպառնալիքների, գերակայությունների, մեխանիզմների, ռեսուլսների թվարկմանը և նկարագրությանը վերաբերող համալիր փաստաթուղթը, որը թեև չունի նորմատիվ փաստաթղթի ուժ, սակայն ձևակերպվելով իրավական ակտի ձևով՝ դառնում է պարտադիր բոլոր պետական մարմինների իրականացման համար:

2. Ազգային անվտանգության դոկտրինը մշակվում է ազգային անվտանգության հայեցակարգի հիմնա վրա և կարող է հանդես գալ որպես նորմատիվային ակտ, կարող է ձևակերպվել որպես օրենքի և ընդունվել օրենսդիր իշխանության բարձրագույն մարմնի կողմից: Ըստ էլության, դոկտրինում օրենսդրորեն ամրագրվում է ազգային շահերի հիերարխիա:

Ազգային շահերի պաշտպանության համար ազգային ուժի զարգացման նպատակով անհրաժեշտ է մշակել ազգային անվտանգության ռազմավարություն:

3. Ազգային անվտանգության ռազմավարությունը նախանշում է ամ-

բոլց աշխարհում, ինչպես նաև պետության ներսում խաղաղ և պատերազմական իրավիճակներում ստեղծված պայմաններում ընտրված նպատակների իրականացման համար բոլոր հնարավոր միջոցների և ռեսուլսների (քաղաքական, տնտեսական, ռազմական, հոգեբանական, տեղեկատվական և այլն) համադրված օգտագործման ուղիները⁹: Որպես ազգային անվտանգության ռազմավարություն՝ ներկայում Արևոտքում հիմնականում հասկանում են այն, ինչ նախկինում՝ *raison d'Etat*. Ազգային ռազմավարությունը իրականություն է դառնում ազգային անվտանգության քաղաքականության իրականացման միջոցով:

4. Ազգային անվտանգության քաղաքականությունը սահմանելու համար կարելի է օգտագործել ամերիկյան քաղաքագետներ Ֆ. Տրեգերի և Ֆ. Սայմոնի մոտեցումը, որի համաձայն՝ «ազգային անվտանգության քաղաքականությունը կառավարության գործունեության մի մասն է, որը նպատակ է հետապնդում իրական ու հավանական սպառնալիքների առկայության դեպքում ստեղծել արտաքին և ներքին պայմաններ, որոնք կաջացեն կենսական կարևորության ազգային արժեքների պաշտպանությանն ու տարածմանը»⁹: Ազգային անվտանգության քաղաքականության կերտման առանցք է ազգային ուժի ստեղծման և հզորացման խնդիրը, որը ներառում է ազգի ռազմատնտեսական, մշակութային և քաղաքական ներուժը: Այս ներուժի զարգացման հիման վրա միայն հնարավոր է պահպանել ազգային շահերը:

Հայեցակարգի, դրկտրինի, ռազմավարության և քաղաքականության հարաբերակցությունը հանդես է գալիս ոչ այնքան աստիճանակարգման, որքան փոխսկապակցված քառանկյունու տեսքով:

Ներկայումս Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում շրջանառության մեջ է դրված «Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության հիմնադրույթների մասին» ՀՀ օրենքի նախագիծը: Օրինագծի հեղինակները, փաստորեն, փորձում են իրավական քազա ստեղծել՝ մշակելով այն ուղենիշները, որոնք պետք է օգտագործվեն հետագայում Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության հայեցակարգի, դրկտրինի ռազմավարության մշակման և քաղաքականության կերտման համար, ինչը դրական է: Միաժամանակ, օրենքի ստեղծման աշխատանքը պետք է համալրվի և հայեցակարգի, և դրկտրինի, և ռազմավարության մշակման աշխատանքներով: Այդ ոլորտում նույնպես լուրջ հետազոտություններ պետք է կատարվեն:

2.2 Ազգային անվտանգության հայեցակարգերն արտասահմանյան երկրներում

ԱՄՆ-ի ազգային անվտանգության հայեցակարգն իր վերջնական տեսքը ստացավ երկրորդ համաշխարհային պատերազմի ավարտից հետո: Այս հայեցակարգը հիմնական ուշադրությունը կենտրոնացնում է արտաքին և ռազմական քաղաքականությունների ոլորտներում և, այդպիսով, ինչպես վերը նշվեց, համապատասխանում է մեծ ստրատեգիայի հայեցակարգին: Դա նշանակում է, որ ԱՄՆ-ում հակված են ազգային անվտանգությունը դիտարկել նեղ սահմաննան տեսանկյունից: Նմանատիպ ուղղվածությունն ի սկզբանե պայմանավորել է ԱՄՆ-ի ազգային անվտանգության հայեցակարգի բնույթը՝ որպես գեռնենքմների և համաշխարհային կարգի ապահովման տեսություն և պրակտիկա (համաշխարհային կարգի արևմտյան հասկացությամբ):

ԱՄՆ-ի ազգային անվտանգության հայեցակարգի գարգացումը երկրորդ համաշխարհային պատերազմից հետո պայմանավորված է հետևյալ գործուներով.

1. Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո եվրոպական երկրների թուլացումը, այդ թվում նաև Մեծ Բրիտանիայի աշխարհառազմական ներուժի անկումը, ինչպես նաև ԱՄՆ-ի կողմից մարդկային, նյութական, մտավոր և կազմակերպչական ռեսուրսների համահավաքը հնարավորություն ստեղծեցին ԱՄՆ-ին՝ առաջնային դիրք ձեռք բերել արևմտյան երկրներում:

2. Մեծ Բրիտանիան, գիտակցելով ստեղծված իրավիճակը և հասկանալով, որ սեփական ռեսուրսներով ինքն այլևս ունակ չի լինի ապահովել ուժերի հավասարակշռությունը Եվրոպայում, լինել արևմտյան աշխարհի լիդեր՝ այդպիսով առաջնորդելով արևմտյան աշխարհը Խորհրդային Միության դեմ սառը պատերազմի ընթացքում, և ընկալելով, որ արևմտյան աշխարհի քաղաքական, մշակութային և աշխարհառազմավարական տեսանկյունից իրեն առավել մոտ է կանգնած ԱՄՆ-ը, իր աշխարհառազմավարական առաքելությունները պաշտոնապես փոխանցեց վերջինիս:

ԱՄՆ-ի ազգային անվտանգության հայեցակարգը մշակվել և ընդունվել է 1996 թ: Այս հայեցակարգի հիմնական սկզբունքներն են՝

- տարածաշրջանային մոտեցման գերակայություն,

- գլորալ պաշտպանություն և կասեցում (դիմադրություն),

- կանխարգելող ներկայություն,

- նոր, մորիլ, տեխնիկապես հագեցված զինված ուժեր: ¹¹

ԱՄՆ-ի կողմից ռազմական ուժի կիրառման հնարավորությունները պահպանվում են, քանի որ՝

1. պահպանվում է Ռուսաստանի «մնացորդային ուժը».

2. պահպանվում է լոկալ զինված կոնֆլիկտների հնարավորությունը.

3. պահպանվում է միջին մակարդակի տարածաշրջանային կոնֆլիկտներում ռազմական բախման մեջ ներգրավվելու հնարավորությունը.

4. ամերիկյան ներկայությունը մնում է չափազանց լուրջ Եվրոպայում, Ասիայում և Հայտինական Ամերիկայում.

5. կարևորագույն խնդիրներից է քմրադեղերի և անօրինական գաղթի դեմ պայքարը ¹²:

ԱՄՆ-ում սեպտեմբերի 11-ի ահաբեկչական գործողություններից հետո այս պատճառները մասնակիորեն փոխվեցին, դրանք սակայն, դեռևս չեն ձևավորվել որպես ազգային անվտանգության հայեցակարգի կետեր:

ԱՄՆ-ի ազգային անվտանգության հայեցակարգի հիմնարար քաղացուցիչ նաև է ազգային շահերի հիերարխիան և համապատասխան գլորալ նպատակների ցանկը:

Եվրոպական երկրների անվտանգության դոկտրինները տարբերվում են միմյանցից, ինչպես նաև ԱՄՆ-ի ազգային անվտանգության հայեցակարգից: Եվրոպայի կարևորագույն յուրահատկությունը անվտանգության ապահովման հաճախելու պահանջան կառուցյան ստեղծումն է, որը, փաստորեն, կոռոդինացիոն դեր և նշանակություն ունի:

Մեծ Բրիտանիայի ազգային անվտանգության հայեցակարգը հիմնականում ունի ռազմական ուղղվածություն: ինչպես որ ԱՄՆ-ը բրիտանացիները նույնպես հակված են ազգային անվտանգությունը դիտարկել նեղ սահմանման տեսանկյունից: Յիմնական խնդիրներն են՝

1. Մեծ Բրիտանիայի տարածքի անվտանգությունը,

2. Յուսիսատլանտյան գործընկերների հետ համատեղ անհրաժեշտ ռազմական անվտանգության պահովումը,

3. Բրիտանական՝ ներկայումս գոյություն ունեցող գաղութների պաշտպանությունը և աջակցությունը Բրիտանական համագործակցության

երկրներից¹³:

Ֆրանսիական ավանդույթի համաձայն, որը սկիզբ է առնում «Եկու Միհիտեղ»-ում 1963թ. նոյեմբերի 3-ին գեներալ Շառլ Դը Գոլի ելույթով, ազգային անվտանգության երևույթը ընդլայնված ընկալում ու մեկնաբանություն ունի և առնչվում է ինչպես ներքին, այնպես էլ արտաքին քաղաքականություններին: Ինչպես վերը նշեցինք, այսպիսի մոտեցումը վերջին տարիներին գերակայող է սկսում դաշնամարդում և հատկապես նոր ձևավորվող ու արդիականացող պետություններում¹⁴: Նշվածը համապատասխանում է նաև այդ պետությունների կողմից այս կամ այն արևմտյան երկրի քաղաքական ինստիտուտների փոխառման տրամաբանությանը (կարևոր է նշել, որ նոր անկախ պետությունների մեջ մասը ստեղծել է կիսանկախական կառավարման ձև, որի դասական օրինակը գոյություն ունի Ֆրանսիայում):

Ֆրանսիայի ներքին քաղաքականության ոլորտում ազգային անվտանգության գերակայություններն են՝

- գոյություն ունեցող քաղաքական համակարգի պաշտպանվածություն.

- տնտեսական կարգի ապահովում.

- անձի անվտանգության ապահովում.

- սոցիալական խաղաղության ապահովում:

Արտաքին քաղաքականության ոլորտում գերակայող են՝

- ազգային զինված ուժերի, այդ թվում նաև միջուկային ուժերի բարձր մարտունակության ապահովումը և անընդհատ զարգացումը.

- քաղաքական մասնակցությունը Եվրոպատլանտյան դաշինքին.

- միացյալ Եվրոպայի ձևավորումը, հզորացումը, սեփական գերակայող դերը և ամերիկյան հեգեմոնիզմի պակասեցումը.

- հատուկ հարաբերությունները Ռուսաստանի և Արևելյան Եվրոպայի երկրների հետ¹⁵:

Չափազանց հետաքրքիր է Եվրոպական երկրներում անվտանգության նոր կոնցեպցիաների և տեսությունների մշակումը: Սասնավորապես, դեռևս 70-ական թվականներին ռազմավարական վերլուծության դաշինքի մասնագետ Ա. Բուերուը առաջ քաշեց այսպես կոչված «ոչ հարձակողական պաշտպանության հայեցակարգը», որը հետագայում զարգացվեց այլ մասնագետների կողմից¹⁶:

Հայաստանի համար առավել կարևոր է վերլուծել Իսրայելի ազգային անվտանգության հայեցակարգի մշակման սկզբունքները և մոտեցումները: Հատկապես կարևոր է այն փաստը, որ ազգային անվտանգության հայեցակարգը հրեաները դիտարկում են Իսրայել-Սփյուռք հարաբերությունների պրիզմայով: Այս ավանդույթը սկիզբ է առել Իսրայելի պետության առաջին վարչապետ Բեն-Գուրիոնի աշխատություններում, որը քաղաքականացված հրեականության մեջ տեսավ հրեական պետության ամրապնդող հիմքերը: Այդ մասին էին խոսում նաև այնպիսի սիոնիստներ (ոչ բացասական առումով), ինչպիսիք էին Յերշելը, Վեյցմանը, Ժաբոտինսկին:

Իսրայելը, ինչպես և Ֆրանսիան, ազգային անվտանգությունը դիտարկում են լայն առումով, ու սա ոչ թե գուտ տեսական մոտեցում է, այլ կյանքի պահանջ:

Դեռևս 1957թ. Բեն-Գուրիոնը հրատարակեց «Իսրայելը և Սփյուռք» հոդվածը, որտեղ խոսվում էր Իսրայելի անվտանգության և աշխարհում Իսրայելի դերի ու նշանակության մասին: Դոդվածի հիմքում դրված էին Յին Կտակարանում արձանագրված մարգարեների գաղափարները Իսրայելի ապագայի մասին, մասնավորապես՝ Եսայի մարգարեի խոսքերը: Միա հիման վրա Բեն-Գուրիոնը նշում է, որ իսրայելյան պետությունն արտաքսված հրեաների համահավաքի համաշխարհային կենտրոն է, և միայն այս համահավաքը կարող է ապահովել Իսրայելը ոչնչացումից, իսկ աշխարհասփյուռ հրեաներին՝ կոտորածից:

Արտաքին քաղաքականության մեջ նույնպես կարևորագույն և միակ հիմնարար դաշնակից կարող են լինել տարբեր երկրներում բնակվող հրեաները, որոնք, ենթարկվելով Իսրայելից ուղարկվող ազդանշաներին և կոչին, պետք է գտն և իրենց մասնակցությունը բերեն հրեական պետության կառուցման ու հզորացման գործին:

Նշված հոդվածում հսկայական տեղ է հատկացված Իսրայել-աշխարհ հարաբերություններին և խոսվում էր Իսրայելի ակտիվ քաղաքականության մասին: Յետաքրքիր է Իսրայելի նախկին վարչապետի կարծիքը ազգային անվտանգության և ազգային զարգացման կապի վերաբերյալ: Ըստ նրա՝ թշնամական արարական շրջափակման պայմաններում, նույնիսկ լիակատար և վերջնական ռազմական հաղթանակով, ինչն ըստ էության անհնար է, անհնար է ապահովել Իսրայելի անվտանգությունը: Այդ

անվտանգությունը արտահայտվում է կյանքի բոլոր ոլորտներում և բոլոր ճակատներում մշտական հզորացմամբ: Իսրայելի հաջորդ վարչապետերը և քաղաքական գործիչները պարբերաբար շեշտում էին, որ ի տարբերություն ռազմական այլ երկրների, նույնիսկ միջին ժամանակահատվածի համար, Իսրայելի գոյապահպանությունը միանշանակորեն պայմանավորված է ազգային զարգացմամբ: Բեն Գուրիոնը խոսում էր նաև անվտանգության այնպիսի քաղկացուցիչների մասին, ինչպիսիք էին.

- հրեաների վերադարձը և բնակեցումը Իսրայելում.
- ազգաբնակչության հավասարաչափ բնակեցումը պետության ամբողջ տարածքում.
- օդային և ջրային տարածքների նվազումը.
- տնտեսական անկախությունը, քանի որ մշտական կախվածությունը արտաքին օգնությունից քաղաքական և ռազմական վտանգ է ներկայացնում¹⁷:

Ըստ էության, այս սկզբունքները հիմնարար եղան Իսրայելի բոլոր կառավարությունների համար ազգային անվտանգության հայեցակարգը արդիականացնելու և պետության ռազմավարությունն իրականացնելու համար:

Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության և ազգային զարգացման հայեցակարգերի մշակման ու քաղաքականությունների իրականացման համար տվյալ մոտեցումները կարող են վերլուծության լուրջ նյութ ծառայել, քանի որ այն, ինչ մենք իրականացնում ենք վերջին տասը տարվա ընթացքում, հրեաները իրականացնում են ավելի քան 50 տարում: Մի կողմ թողնելով գաղափարախոսական, կրոնական տարբերությունները, տարբեր մոտեցումները համաշխարհային քաղաքականության մեջ, մի շարք ազգային նպատակների հակառակությունները, մեր երկու ազգերի լորրիստական կառուցյների մրցակցությունն աշխարհի ուժային կենտրոններում՝ մենք պետք է լուրջ կերպով ուսումնասիրենք Իսրայելի ազգային անվտանգության և ազգային զարգացման ապահովման մեթոդաբանությունը:

2.3 Ազգային անվտանգության հայեցակարգը որպես ազգային կառավարման եւ ազգային զարգացման ռազմավարության հայեցակարգային հիմք

Ժամանակակից աշխարհում ազգային անվտանգության հայեցակարգը պետական կառավարման հայեցակարգային դրույք է և պարտադիր է ազգային զարգացման ծրագրերի ստեղծման համար:

Տվյալ դեպքում հստակորեն գործում է անվտանգություն-կայունություն-զարգացում եռամիասնական մեխանիզմը, որի յուրաքանչյուր բաղկացուցիչ հստակորեն փոխկապակցված է հաջորդ երկու բաղկացուցիչների հետ, և լիակատար կերպով կարող է իրականացվել միայն մյուս բաղկացուցիչների իրականացման պայմաններում:

Ազգային անվտանգության հայեցակարգը ներկայացնում է այն գերակայությունները, որոնք պետք է տեղ գտնեն պետական կառավարման մոտեցումների հիմքում: Եթե մենք դիտարկում ենք կառավարումը որպես ազգային նպատակների իրականացման և շահերի պաշտպանության համար ազգային ռեսուրսների համախմբմանը և կոորդինացմանը ուղղողված կենտրոնացված գործունեություն, ապա ազգային շահերը, որոնք անմիջականորեն կապված են յուրաքանչյուր էթնիկ խմբի գոյապահպանության և զարգացման հետ, մշակվում ու ներկայացվում են ազգային անվտանգության հայեցակարգում, դոկտրինում և ռազմավարության մեջ:

Չափազանց կարևոր է ազգային զարգացման և ազգային անվտանգության հարաբերակցությունը, որը կախված է պետության չափերից, տնտեսական զարգացման մակարդակից, ազգային ուժից: Մեծ քաղաքական համակարգերի համար, որոնք մեծարիվ ռեսուրսներ ունեն, ազգային զարգացման գործընթացում տեղ գտած հիմնախնդիրները խոշոր ազդեցություն կարող են ունենալ պետության ազգային անվտանգության վրա, սակայն ժամանակային առումով պետությունը կարող է ունենալ «ամորտիզացիոն ժամանակահատված»: Այլ կերպ ասած՝ 2-5 տարվա զոյլական կամ բացասական զարգացումները տվյալ երկրների կենսական շահերի համար սպառնալիք չեն ստեղծում, այլ կարող են սպառնալիք ստեղծել կարևոր շահերի համար (օրինակ՝ ԱՍՆ, Գերմանիա, Ռուսաստան): Փոքր երկրների համար զարգացման նույն տեմպերը սպառնալիք են ստեղծում կենսական և գոյապահպանության շահերի համար (իրա-

յել, Հայաստան): Այս հիմնախնդիրը լուրջ կերպով ուսումնասիրվել է Խայելի ռազմավարական կառավարմանը զբաղվող իշխանության մարմինների կողմից և «զարգացումը ազգային անվտանգության հրամայական է» կարգախոսը Խայելի ռազմավարական կառավարման կարևոր պոստուլատներից մեկն է:

Ազգային անվտանգության և զարգացման հարաբերակցությունը ներկայում հիմնականում մշակվում է հանրային կյանքի ներքին և արտաքին քաղաքականության, տնտեսության ու սոցիալական ոլորտներում: Տնտեսական զարգացումը և սոցիալական խաղաղությունը իրենցով պայմանավորում են ազգային անվտանգության ռազմական, քաղաքական, տնտեսական, սոցիալական ասպեկտները: Հաշվի առնելով, որ ներկայում ազգային անվտանգությունը դիտարկվում է ոչ միայն որպես պաշտպանություն ռազմական մեխանիզմների օգտագործմամբ և հետախուզություն ու հակահետախուզություն, այլ նաև որպես ոչ ռազմական միջոցներով պաշտպանություն և ազդեցության տարածում (տնտեսական էքսպանսիա, համաշխարհային ինֆորմացիոն տարածքի նվաճում և այլն), տնտեսական զարգացումը և ինֆորմացիոն ու տելեկոմունիկացիոն նորարարությունը, ըստ Էության, հանդես են գալիս որպես զարգացման միջոցով ազգային անվտանգության ապահովման կարևորագույն մեխանիզմներ: Պատահական չէ, որ մի շարք երկրներում ազգային անվտանգության խորհուրդների, պաշտպանության խորհուրդների հետ միաժամանակ ստեղծվում են տնտեսական անվտանգության ինֆորմացիոն և հեռահաղորդակցման անվտանգության խորհուրդներ, որոնք, փաստորեն, կատարում են միևնույն դերը, ինչ և ազգային անվտանգության ու պաշտպանության խորհուրդներն իրենց ոլորտներում: Եթե Վերցնենք ազգային անվտանգության ներ սահմանումը, այսինքն՝ անվտանգությունը որպես սպառնալիքներից և հարձակումներից պաշտպանություն, ապա ըստ ֆրանսիական մոտեցման, ազգային անվտանգության բաղկացուցիչ հանդիսացող ազգային պաշտպանությունը ստանում է եռակողմ կառուցվածք՝ ռազմական պաշտպանություն-քաղաքացիական պաշտպանություն և տնտեսական պաշտպանություն¹⁸: Ներկայիս ֆրանսիացի մասնագետներն այս եռակողմ կառուցվածքի զարգացումը տեսնում են անվտանգության գերակայության ուղղությամբ: Այսինքն՝ արդեն խոսում են այն մասին, որ ազգային անվտանգությունն ունի երեք կարևորագույն

բաղկացուցիչ՝ ռազմական անվտանգություն, քաղաքացիական անվտանգություն և տնտեսական անվտանգություն (այս ոլորտում ֆրանսիական տեսությունները բավական հետաքրքիր են և ընդլայնված քննարկման կարիք ունեն) :

2.4 Ազգային անվտանգության հայեցակարգ եւ ազգային զարգացման ռազմավարություն

Պետության կառավարման և ազգային զարգացման քաղաքականության կերտման տեսանկյունից անհրաժեշտ է ազգային անվտանգության և ազգային զարգացման հայեցակարգային զարգացուները օպերացիոնալացնել: Դա անհրաժեշտ է անել երկու ուղղությամբ:

1. ազգային անվտանգության հայեցակարգը, դոկտրինը և ռազմավարությունը համապատասխանեցնել ազգային զարգացման ռազմավարությանը և ծրագրին.

2. ստեղծել քաղաքական ու հասարարական կոալիցիաներ՝ համապատասխանեցված ծրագրերի իրականացման քաղաքական և հանրային ապահովման համար:

Այս երկու ուղղությունները պետք է իրականացվեն միաժամանակ և հաջորդաբար, և զուգահեռաբար: Հայաստանի Հանրապետության համար այս հիմնախնդիրը դառնում է առավել կարևոր, քանի որ՝

1. Հայաստանի Հանրապետությունը փոքր երկի է.
2. տնտեսական վիճակը և զարգացման տեմպերը չի կարելի համարել կայուն:

3. հայ ժողովուրդը, ըստ էության, բաժանված է երեք խոշոր հատվածների՝ Հայաստանի բնակիչներ, Ղարաբաղի բնակիչներ և սփյուռքահայեր.

4. հայ կառավարող էլիտան տեսական և կիրառական տեսանկյուններից չունի բավականաչափ փորձառություն ազգային անվտանգության հայեցակարգի և ազգային զարգացման հայեցակարգի մշակման համադրման և իրականացման գործընթացում.

5. Հայաստանի զարգացման գործընթացում առկա է անհավասարակշռություն՝ քաղաքական, տնտեսական, քաղաքացիական, սոցիալական,

ռազմական բաղկացուցիչների միջև, և այդ անհավասարակշռությունն արդեն իսկ հանգեցնում է ամբողջ հայ ժողովորդի անվտանգության սպառնալիքների առաջացմանը:

Այս հիմնախնդիրը լուրջ ուսումնասիրությունների և մշակումների կարիք է գգում, սակայն պետք է հաշվի առնել, որ ժամանակակից զարգացող աշխարհը, որը միաժամանակ լի է սպառնալիքներով, երկար ժամանակ չի տրամադրում: Ներկայում մենք ժամանակի և փորձի պակաս ունենք այս ոլորտում, որը պետք է փոխհատուցվի առավել ինտենսիվ աշխատանքով Հայաստանում, Սփյուռքում և Ղարաբաղում, այդ աշխատանքների կորորդինացմամբ և սիներգիայով ու առավել ունակ մասնագետների ներգրավմամբ: Անհրաժեշտ է հասկանալ, որ եթե Հայաստանի Հանրապետությունը զարգացում չապրի, ապա դա լրջորեն կխարարի ազգային անվտանգությունը, իսկ ազգային անվտանգության խարարումը կարող հանգեցնել պետության դեֆորմացիայի և կործանման: Այսօր գոյություն ունեն ազգային անվտանգության և ազգային զարգացման կորելացիայի նախնական մշակումներ, որոնց ամբողջացումը կարող է հնարավորություն ստեղծել՝ մշակելու անվտանգության-զարգացման համալիր մեխանիզմ:

3. Անհրաժեշտ իրավական եւ ինստիտուցիոնալ բազա

3.1 Ազգային անվտանգության կոռորդինացիոն ինստիտուտներ

Ազգային անվտանգության իրականացման համար XX դարի երկրորդ կեսից բազմաթիվ երկրներ ստեղծեցին անվտանգության խորհուրդներ: Այս խորհուրդների հիմնական խնդիրն է կոռորդինացնել ազգային անվտանգության համար պատասխանատու մարմինների գործունեությունը:

Առավել հաջող օրինակ է համարվում ԱՄՆ-ը: Շատ հայտնի է ԱՄՆ նախագահին կից գործող ազգային անվտանգության խորհուրդը, որը հիմնականում գրադարձում է արտաքին անվտանգության ոլորտի կոռորդինացման աշխատանքներով՝ անմիջականորեն աշխատելով պաշտպանության նախարարության, պետական դեպարտամենտի և հետախուզական ծառայությունների և այլն): Քիչ հայտնի է այն փաստը, որ ԱՄՆ նախակին նախագահ Ջ. Բ. Հարրինը ստեղծել է, այսպես կոչված՝ ազգային տնտեսական խորհուրդ, որը տնտեսական ոլորտում ունի նույն դերը, ինչ ազգային անվտանգության խորհուրդը՝ արտաքին քաղաքականության մեջ: Հետաքրքիր է այն փաստը, որ ազգային տնտեսական խորհրդի շատ աշխատակիցներ միաժամանակ աշխատում են նաև ազգային անվտանգության խորհրդում: Ֆրանսիան ազգային անվտանգության խորհրդի գործառույթները հիմնականում փոխանցել է այսպես կոչված ազգային պաշտպանության գլխավոր քարտուղարությանը: Սակայն, ըստ ֆրանսիացի մասնագետների, այս կառույցը լիովին չի կարողանում կատարել իր դերը¹⁹, և ներկայումս խնդիր է առաջացել ֆրանսիայում ստեղծել ազգային անվտանգության խորհրդին համանան կառույց: Սակայն, ֆրանսիայում միաժամանակ գործում են մի շարք կառույցներ, որոնք պատասխանատու են ներքին անվտանգության խնդիրների համար՝ քաղաքացիական անվտանգություն և պաշտպանություն, հանրային անվտանգություն և պաշտպանություն, տնտեսական պաշտպանություն և այլն: Առավել հետաքրքիր է այն փաստը, որ ֆրանսիայի նախակին վարչապետ Էդուարդ Բալայուրի գործունեության ընթացքում ֆրանսիայում ստեղծվեց ներ-

քին անվտանգության կոմիտե, որն անմիջականորեն ենթարկվում է վարչապետին, և որի հիմնական նպատակն է ապահովել քաղաքացիների անձնական անվտանգությունը:

Ի տարբերություն արևմտյան երկրների, Ուստաստանում և Թուրքիայում անվտանգության խորհուրդներն զբաղվում են և ներքին, և արտաքին անվտանգության հիմնախնդիրներով: Սակայն ուժային կառույցները երկու դեպքում են գերակայող են հանդիսանում: Հետաքրքիր է Ուստաստանի փորձը քաղաքական խորհրդի ստեղծման ուղղությամբ, որն զբաղվում է պետական կառավարման, քաղաքական և տարածքային հիմնախնդիրներով: Ազգային անվտանգության կոռորդինացման գործունեությունը պարտադիր ստանում է օրենսդրական ապահովում:

Ներկայումս լուրջ ուշադրություն է դարձվում տեղեկատվական անվտանգության իրավական ապահովման գործներացին, ինչը հատկապես կարևոր է Հայաստանի Հանրապետության համար:

3.2 Ազգային անվտանգության ապահովման անհրաժեշտ օրենսդրական բազա

XX դարի կեսերին, երբ ազգային անվտանգությունը դարձավ պետական ռազմավարական կառավարման կարևորագույն հայեցակարգային հիմք, մի շարք երկրներում, հատկապես ԱՄՆ-ում, սկսվեց այդ ոլորտը կարգավորող օրենսդրական դաշտի առավել հստակեցումը և համակարգումը: Բնականաբար, մինչ այդ նույնական գործունեություն ունեին համապատասխան բազմաթիվ օրենքներ, սակայն դրանք հիմնականում վերաբերում էին արտաքին քաղաքականությանը, պաշտպանությանը, պետական գաղտնիքին, հասարակական կարգի պահպանմանը և անվտանգության մարմինների գործունեությանը: 50-ական թվականներից հետո այդ օրենքներն առավել մեծ չափով համակարգվեցին, մշակվեց իրավական ակտերի հիերարխիան, և ընդունվեցին իրավական ակտեր առավել լայն կոռորդինացիոն ու ռազմավարական բնույթի, ինչպես նաև՝ ըստ հասարակական կյանքի ոլորտների:

Ինչպես արդեն նշվեց, ԱՄՆ-ում պետական կառավարման հիմնարար փաստաթուղթը է ազգային անվտանգության հայեցակարգը, որի հիմնական արդեն մշակվում են ազգային արտաքին ռազմավարությունը, ազ-

գային պաշտպանության ռազմավարությունը և այլն: Կարևորագույն փաստաթղթեր են ԱՄՆ Անվտանգության խորհրդի որոշումները և ազգային անվտանգության ոլորտում նախագահի դիրեկտիվները: Այդ որոշումների մի մասը հսկայական դեր են խաղացել գլոբալ անվտանգության հիմնախնդիրների գործում:

Վերը խոսվել էր այն մասին, որ Ֆրանսիայում ազգային անվտանգության հիմնախնդիրները, ի տարբերություն ԱՄՆ-ի, դիտարկվում են ինչպես ներքին, այնպես էլ արտաքին քաղաքականության հրամայականների պրիզմայով և, հետևաբար, հավասարաչափ իրավական կարգավորման է ենթարկվում և ներքին, և արտաքին անվտանգությունը՝ հետևյալ իրավական ակտերով:

Լայն առօնուվ ֆրանսիական փորձը հետաքրքիր է նաև նրանով, որ պետական պլանավորում է իրականացվում ազգային զարգացման խնդիրը լուծելիս: Պլանավորումն իրականացվում է ինչպես տնտեսության, այնպես էլ անվտանգության և պաշտպանության ոլորտներում: Ֆրանսիայում գործում է օրենք պետական պլանավորման մասին: Վերջերս օրենքում մտցվեցին մի շարք փոփոխություններ, որոնք ուղղված էին տնտեսության առավել ազատականացմանը, սակայն պետական կառավարման պլանավորման սկզբունքները պահպանվեցին:

Ֆրանսիայում ազգային անվտանգության ոլորտի հիմնարար փաստաթուղթը է այսպես կոչված՝ պաշտպանության «Սպիտակ գիրքը»: Յատկապես լուրջ ուշադրություն է դարձվում ներքին անվտանգության իրավական ապահովմանը, մասնավորապես ընդունվել են 1791թ. օգոստոսի 3-ի, 1791թ. հուլիսի 10-ի օրենքները, 1959թ. հունվարի 10-ի օրդոնանսը և այլն:

Ֆրանսիայի փորձի ուսումնասիրության ընթացքում աչքի է զարնում քրեական օրենսգրքում 1992թ. հուլիսի 22-ին կատարված փոփոխությունը և հավելվածը (որը, ըստ ֆրանսիացի մասնագետների, օրենսդրական նշանակություն ունի): Վերջինս կոչվում է «Չորրորդ գիրք. հանցագործություններ ազգի, պետության և հանրային խաղաղության նկատմամբ», որի առաջին կետը վերաբերում է «Ազգի հիմնարար շահերի պաշտպանության» հիմնախնդրին:

Ուսասատանի Դաշնությունը որպես մի կողմից անցումային երկիր, որը փորձում է ձևավորել ժողովրդական ռեժիմով կառավարվող քաղաքական

համակարգ և միաժամանակ պետություն, որն ունի կայսրության, գերտերության արտաքին քաղաքական և ռազմական էքսպանսիվայի փորձ, պետականության և կենտրոնացված կառավարման հզորագույն ավանդություններ, հետխորհրդային բոլոր հանրապետություններից առաջինը ձեռնամուխ եղավ ազգային անվտանգության ապահովման համար օրենսդրական բազայի ձևավորման գործին: Նշվածը պայմանավորված է նաև հետևյալով. չնայած երկրներ աշխարհի կործանումը հանգեցրեց Ռուսաստանի բուլացմանը և ԱՄՆ-ի միանշանակ գերակայունությանը, իսկ Խորհրդային Սփյուրյան և սոցիալիստական ճամբարի կործանումը Ռուսաստանին զրկեց իր կողմից վերահսկվող տարածքների 70%-ից, վերջինս շարունակեց պահպանել Արևելյան Եվրոպայից մինչև Արևելյան Ասիա տարածքային ծգվածությունը, կրկին մեծ պետություն դառնալու ներուժը և աշխարհառազմավարական խաղի ակտիվ մասնակցի նկրտումները: Ենշտ է, ներկայումս Ռուսաստանը չի կարող հանդիսանալ Հերթական, ինչից միանշանակ գգուշանում են ամերիկացիները, սակայն կարող է ակտիվորեն փնտրել դաշնակիցներ և ձևավորել աշխարհառազմավարական տարածքներ: Ռուսաստանն ինքը սա իրաշալի գիտակցում է, և գիտակցում է նաև, որ իրեն պետք է փորձեն խանգարել՝ սպառնալիքներ ստեղծելով իր անվտանգության համար: Այս պատճառով Ռուսաստանը շտագում է ձևավորել անվտանգության ապահովման իրավական ինստիտուցիոնալ, նյութատեխնիկական և բարոյահոգեբանական համակարգերը:

Ռուսաստանի փորձը բավականաչափ հետաքրքիր է անցումային բոլոր հասարակարգերի համար: Տարբեր տարիների ընթացքում Ռուսաստանի Դաշնությունում ընդունվել են ազգային անվտանգությանը վերաբերվող մի շարք իրավական ակտեր: Այդ թվում՝

1. Ռուսաստանի Դաշնության օրենքը անվտանգության վերաբերյալ (1993թ.).
2. Յրաման ՌԴ ազգային անվտանգության հայեցակարգի մասին (2000թ.).
3. Յրաման ՌԴ անվտանգության խորհրդի կարգավիճակի հաստատման մասին (1993թ.).
4. Օրենք պաշտպանության մասին (1999թ.).
5. Յրաման ՌԴ տնտեսական անվտանգության պետական ռազմավա-

րության մասին.

6. Օրենք ահաբեկչության դեմ պայքարի մասին (1998թ.).

7. Օրենք տեղեկատվության, տեղեկատվական համակարգերի և տեղեկատվական պաշտպանվածության մասին (1995թ.).

8. Օրենք վտանգավոր արտադրական օբյեկտների արդյունաբերական անվտանգության մասին (1997թ.):

Դայաստանի Հանրապետությունում, վերջին տարիներին մասնագետների ահազանգերից հետո, պետական իշխանության մարմիններն սկսել են ուշադրություն դարձնել ազգային անվտանգության ոլորտի համալիր փաստաթղթերի ստեղծմանը: Ազգային ժողովում շրջանառության մեջ է դրված «Դայաստանի Հանրապետության ազգային անվտանգության գերակայությունների մասին» օրենքի նախագիծը: Այս օրենքի նախագիծը կարևոր առաջին քայլն է ՀՀ ազգային անվտանգության ապահովման գործնարկի իրավական պաշտպանության համար, սակայն, ինչպես վերը նշվեց, այն պետք է հիմնվի հայեցակարգային ռազմավարական մշակումների վրա: Նախագիծը նաև վերամշակման և համալրման կարիք ունի:

Ազգային անվտանգության ապահովման համար իրավական հիմք են նաև այն միջազգային համաձայնագրերը, որոնք ուղղված են գլոբալ կամ տարածաշրջանային անվտանգության ապահովմանը և այդպիսով ազդում են պետությունների էքնիկ և սոցիալական խմբերի ու անհատների անվտանգությանը:

Բնականաբար, առավել կարևոր են Միացյալ ազգերի կազմակերպության փաստաթղթերն անվտանգության և խաղաղության գլոբալ համակարգի ստեղծման վերաբերյալ: Մասնավորապես, ՄԱԿ-ի վերջին երկու նախագահների՝ Քոֆի Անանի և Բուտրոս Բուտրոս Ղալիի տարեվերջյան գեկույցներում բազմիցս խոսվել է համաշխարհային անվտանգության համակարգի մշակման վերաբերյալ: Քոֆի Անանի 1998թ. գեկույցում առաջին, երկրորդ, չորրորդ գլուխմների հիմնական գաղափարը անվտանգության համակարգի ստեղծումն է:

Առավել կարևոր է ՄԱԿ-ի գլխավոր ասամբլեայի 19-րդ նստաշրջանում ընդունված որոշումը, որով սահմանվում է ազրեսիան:

Նշվածից բացի ՄԱԿ-ը ընդունել է մի շարք իրավական ակտեր ևս, որոնցից առավել կարևոր կարելի է համարել հետևյալները՝

• միջազգային անվտանգության վերաբերյալ հոչակագիրը (16.12.1970).

• միջազգային խաղաղության և անվտանգության պահպանման ոլորտում ՄԱԿ-ի կողմից փաստերի հստակեցման վերաբերյալ հոչակագիրը (9.12.1991).

• ՄԱԿ-ի 50-րդ տարեդարձի վերաբերյալ հոչակագիրը (24.10.1995).

• ՄԱԿ-ի և միջազգային խաղաղության ու անվտանգության ապահովման տարածաշրջանային համաձայնագրերի կամ մարմնների միջև համագործակցության բարելավման հոչակագիրը (9.12.1994).

Վերջին հոչակագիրը, փաստորեն, կապ է ստեղծում տարածաշրջանային անվտանգության համակարգերի ու համաձայնագրերի և համաշխարհային (գլոբալ) կամ միջազգային անվտանգությանը վերաբերող ինստիտուտների և համաձայնագրերի միջև, ինչը աշխարհաքաղաքական զարգացման ժամանակակից փուլում չափազանց կարևոր է:

Տարածաշրջանային անվտանգությունը վերջին տարիներին առավել մեծ չափով է միջազգային իրավական կարգավորման ենթարկվում: Անվտանգության ոլորտում առավել արագ են զարգանում Եվրոպական տարածքի անվտանգությունն ապահովող ինստիտուտները (Հյուսիսաւալանույան դաշինք, Եվրոպայի անվտանգության և համագործակցության կազմակերպություն, ԱրևմտաԵվրոպական միություն և այլն), և նախկին ԽՍՀՄ-ի ու հարակից տարածքների անվտանգությունն ապահովող ինստիտուտները և միջազգային իրավական ակտերը (ԱՊՀ-ը, ԱՊՀ հավաքական անվտանգության համաձայնագիրը և այլն):

Հյուսիսաւալանույան դաշինքի գործունեությունը հետխորհրդային ժամանակաշրջանում բավականաչափ փոփոխություններ է կրել, և նրա գերակայունությունները ռազմական ոլորտից առավել մեծ չափով տեղափոխվել են միջազգային քաղաքական ոլորտ: Հետևաբար, պաշտպանությունը՝ որպես դաշինքի գործունեության հիմնական մեխանիզմ, իր տեղը գիտել է առավել ընդլայնված անվտանգության պահպանմանը: Դա մեծ չափով արտահայտված է Կաշինգտոնում 1999թ. ապրիլի 23-24-ը կայացած Հյուսիսաւալանույան դաշինքի անդամ պետությունների և կառավարությունների դեկավարների նստաշրջանում հաստատված «Հյուսիսաւալանույան դաշինքի ռազմավարական հայեցակարգ»-ում մեջ: Կարելի է ասել, որ տվյալ կազմակերպության գործունեության մեջ պաշտպանության փոխարեն անվտանգության գերակայությունը արտահայտվում է նաև հետևյալ փաստով՝ Ֆրանսիան, որը Շարլ Գոլի նախագահության

օրոք դուքս է Եկեղ Հյուսիսաւլանտյան դաշինքից՝ համաձայն չինելով վերջինիս ռազմական-պաշտպանական և ռազմական քաղաքականությանը, ներկայում վերստին անդամագործել է այդ կազմակերպությանը, սակայն միայն վերջինիս քաղաքական կառույցներին: Սա ցույց է տալիս, որ Ֆրանսիան ցանկանում է պահպանել պաշտպանության ոլորտում իր անկախությունը, սակայն իմնականում անվտանգության քաղաքականության ոլորտում, որը նա դիտարկում է որպես առավել ընդլայնված և գերակայող երևույթ, նաև պատրաստ է համագործակցել ու լինել առաջանառություն:

Հարավային Կովկասի տարածաշրջանում ստորագրված մի շարք փաստաթղթերը, մասնավորապես՝ սովորական սպառազինությունների քանակի, հավաքական անվտանգության համակարգի վերաբերյալ և այլն, այսօր ապացուցում են, որ, ի տարբերություն արևմտյան աշխարհամասի, անվտանգությունը մեր տարածաշրջանում մեծ չափով նույնացվում է պաշտպանության հետ, այսինքն՝ միանշանակ գերակայում է ռազմական և ռազմադիվանագիտական բաղկացուցիչը:

Ներկայացնելու համար տարբեր ոլորտների անվտանգության համակարգի մաս հանդիսացող օրենսդրական ակտերը և ինստիտուտները, կարելի է օգտագործել հետևյալ մատրիցը, որը կարող է նաև մերողաբանական նշանակություն ունենալ ազգային անվտանգության մերողաբանության նշակնան ընթացքում:

Օրինակ

Օրենքներ եւ սուբյեկտներ

<i>Ələñi</i> <i>Əzizəli</i>	<i>Əzizəli</i> <i>Əzizəli</i>	<i>Çiçək</i> <i>Çiçək</i>	<i>Təyinat</i> <i>Təyinat</i>	<i>Əməkdaşlıq</i> <i>Əməkdaşlıq</i>	<i>Təyinat</i> <i>Təyinat</i>
<i>NATO</i> 23-24 04.99.Ə.	<i>NATO</i> 23-24 04.99.Ə.				
<i>NATO</i> 23-24 04.99.Ə.	<i>NATO</i> 23-24 04.99.Ə.				
<i>NATO</i> 23-24 04.99.Ə.	<i>NATO</i> 23-24 04.99.Ə.				
<i>NATO</i> 23-24 04.99.Ə.	<i>NATO</i> 23-24 04.99.Ə.				

Ինչպես տեսնում ենք, Եվրոպատլանտյան դաշինքը և դաշինքի շրջանակներում ընդունված փաստաթղթերը վերաբերվում են տարբեր մակարդակների և տարբեր ուղղութերի

3.3 Ազգային անվտանգության եւ զարգացման իրականացման մեթոդները

Ազգային անվտանգության ապահովման և ազգային պլանավորման իրականացման գործընթացները, ինչպես վերը նշվեց, բավական բարդ կերպով փոխկապակված են և պահանջում են գիտական մոտեցում: Կարևորագույն խնդիրներից է ազգային շահերի հիերարխիայի որոշումը:

Ազգային շահերի հիերարխիայի մասին առաջին մշակումը կատարել է քաղաքական ռեալիզմի հիմնադիրներից մեկը՝ միջազգային հարաբերությունների ամերիկացի մասնագետ Ջանց Մորգենթաուն։ Վերջինս տարբերում է ազգային շահերի երկու մակարդակ՝

- Կենսականորեն կարևոր,
 - Երկրորդական:

Առաջին շահերի պաշտպանության համար անհրաժեշտ է օգտագործել բոլոր միջոցները, կենտրոնացնել բոլոր ուժերը, և այստեղ կոնպրոմիսներ չեն կարող լինել: Երկրորդական շահերը կարող են լինել քաղաքական առևտուի և կոնպրոմիսի առարկա: Որպես կենսական և երկրորդական շահերի չափանիշ, Մորգենթաուն առաջարկում էր աշխարհագրությունը: Օրինակ, Կուրբան հանդիսանում է ԱՄՆ-ի՝ կենսականորեն անհրաժեշտ շահերի ոլորտը, իսկ Վիետնամը՝ ոչ: Մորգենթաուն դեմ էր Վիետնամի պատերազմին՝ այն համարելով անօգուտ²⁰: Աներիկյան «Ժառանգության հիմնադրամի» ներկայացուցիչները նշակել են շահերի հիերարխիայի այլ մոտեգում՝

1. Կենսականորեն կարևոր շահեր,
 2. կարևոր շահեր,
 3. սահմանափակ շահեր:

Կան նաև բազմաթիվ այլ մոտեցումներ: Սակայն հիմնախնդրի էռլըունը հետևյալն է. ինչպիսի՞չ չափանիշների հիման վրա է հնարավոր որոշել շահերի հիերարխիան:

Նույն «Ժառանգության հիմնադրամի» փորձագետներն առաջարկում են երկու հիմնական չափանիշ՝

1. պետության ինչպիսի՞ պոտենցիալ վճառ կարող են հասցնել տվյալ գործոնները կամ սպառնալիքները.
 2. որքա՞ն հրատապ է այդ սպառնալիքը:

1982թ. Վաշինգտոնում ազգային անվտանգության համալսարանի կողմից կազմակերպված ազգային անվտանգության իմնախնդիրներին վերաբերող իններորդ կոնֆերանսին առաջարկվեց ԱՄՆ-ի ազգային շահերի հետևյալ աստիճանակարգումը՝

1. գոյապահպանության շահեր,
2. կենսական շահեր,
3. կարևոր շահեր,
4. ծայրամասային շահեր:

ԱՄՆ-ի «Ազգային անվտանգության ռազմավարությունը առանձնացնում է ԱՄՆ-ի ներկայիս կարևորագույն շահերը, որոնք համապատասխանում են երկրի գլոբալ նպատակներին.

1. ԱՄՆ-ի գոյապահպանությունը որպես ազատ, անկախ ազգի իր հիմնարար արժեքներով և ժողովրդի ու հաստատությունների անվտանգությամբ:

2. ԱՄՆ-ի առողջ և զարգացող տնտեսություն, որը պետք է ապահովի մարդկանց բարեկեցությունը և ազգային ռեսուրսների աճը:

3. Առողջ գործընկերային և քաղաքականապես ակտիվ հարաբերություններ դաշնակիցների և բարեկամ ազգերի հետ

4. Կայուն և անվտանգ աշխարհ, որտեղ անրապնդվում են տնտեսական և քաղաքական ազատությունները, մարդու իրավունքները, ժողովրդավարական հաստատությունները:

Այս նպատակներից յուրաքանչյուրի իրականացման համար մշակված են մեխանիզմներ և գործողությունների համալիրներ:

Ազգային շահերը, դրանց իրականացման հնարավորությունները, ինչպես նաև պաշտպանության համար անհրաժեշտ մեխանիզմները բնորոշելու համար կարևորագույն խնդիր է ազգային շահերը հստակ ձևակերպելու պետական կառավարման մարմինների ունակությունը։ Անհրաժեշտ է, որպեսզի այդ ձևակերպումը լինի լեզիտիմ ինչպես քաղաքական և ռազմական էլիտաների, այնպես էլ ժողովրդական լայն զանգվածների շրջանակներում։ Որպես կանոն, համարվում է, որ արտաքին քաղաքականությունը և ազգային անվտանգության համակարգը գլոբալ տեսանկյունից իմնականում քաղաքական և ռազմական էլիտաների ուշադրության առարկա են։ Սակայն այն երկրներում, որտեղ ժողովրդն ապրում է պարբերական սպառնալիքի պայմաններում, ազգային անվտանգության

խնդիրը ժողովրդական զանգվածների մշտական հետաքրքրության առարկա է։ Ուրիշ երկրներում հասարակական կարծիքն սկսում է այլ ազդեցություն գործել ազգային շահերի հիերարխիայի մշակման վրա այն դեպքերում, երբ վտանգի զգացողություն է ունենում։ Նշված պայմաններում ազգային շահերի հիերարխիան պետք է ձևավորվի՝ հաշվի առնելով հասարակական կարծիքը։ Այս պատճառով երեմն քաղաքական գործիչների կողմից ազգային շահերի ձևակերպումը և դրանց պաշտպանությունը, ինչպես նաև դրանց հիերարխիան կրում են պոպուլիստական բնույթ, ինչն իրենից վտանգ է ներկայացնում պետական կառավարման համար։ Սակայն որքան էլ առանձին քաղաքական գործիչներ պոպուլիստներ լինեն, նրանք կարող են այս տեսանկյունից «աշխատեցնել» միայն որոշ շահեր։

Ազգային հիերարխիայի մշակումից հետո երկրորդ կարևորագույն խնդիրը ազգային գերակայությունների և ազգային նպատակների հիերարխիաների մշակումն է։ Այս հիմնախնդիրը մասսարմ ավելի բարդ է, քան ազգային շահերի հիերարխիայի մշակումը, քանի որ ազգային շահերի վերաբերյալ պատկերացումներն առավել մեծ չափով կապված են տվյալ պետության, երկրի աշխարհագրական դիրքի, պատմական զարգացման, մենթալիտետի հետ։ Ազգային գերակայությունները և նպատակները նույնպես կարող են մշակվել դարերի ընթացքում և, ձևավորվելով ու արմատավորվելով հանրային մտածողության մեջ, ստանալ ազգային շահերի տեսք։ Սակայն նրանք որոշակիորեն առավել հաճախ են իրավիճակային բնույթ կրում, քան ազգային շահերը։ Մի շարք դեպքերում ազգային շահերը և ազգային նպատակները կարող են առասպելականացվել։ Այսինքն՝ հասարակական կարծիքում, երեմն նաև էլիտայի շրջանակներում ազգային շահերի և նպատակների վերաբերյալ կարող են լինել որոշակիորեն վերացական, տարածության և ժամանակի մեջ ոչ իրական պատկերացումներ։

Եթե ազգային շահերն առավել մեծ չափով վերաբերում են ազգային անվտանգության ռազմավարությանը և հայեցակարգին, ապա ազգային գերակայությունները, որոնք մշակվում են ազգային շահերի հիման վրա ու ձևակերպվում են որպես ազգային նպատակներ՝ հետագայում իրականացվելու համար պետական կառավարման ռազմավարական պլանավորման ընթացքում, առավել մեծ չափով վերաբերում են ազգային զար-

գացման հիմնախնդիրներին: Խոսքը, իհարկե, վերաբերում է զարգացման ռազմավարության մշակմանը:

Ներկայումս մշակվել են ազգային զարգացման բազմաթիվ տեսություններ: Այդ տեսությունների մի մասն առաջադրում է նաև զարգացման պլանավորման մեխանիզմներ, որոնցից մի քանիսն արդեն փորձարկում են անցել:

Պլանավորման ժամանակակից մեթոդներն արևմտյան երկրներում ներկայումս կրում են համադրյալ բնույթ և սերտորեն փոխկապակցված են ազգային անվտանգության խնդրի հետ: Որպես կապակցող օղակ՝ հանդես են գալիս հասարակական կյանքի քաղաքական և տնտեսական ոլորտները: Այսինքն՝ քաղաքական անվտանգությունը և քաղաքական զարգացումն ու արդիականացումը, տնտեսական անվտանգությունը և տնտեսական զարգացումն ու արդիականացումը, փաստորեն, հանդես են գալիս որպես պետական կառավարման պլանավորման ֆունդամենտ:

Փոքր երկրների համար ազգային անվտանգության ապահովումը հստակորեն պայմանավորված է ազգային պերմանենտ զարգացմանը և հաջողությամբ: Սա հստակորեն գիտակցում են հրեաները: 1973թ. հրեա մասնագետ Կարլաբին նշում էր, որ «հաջողությունը կենսական հրամայական է: Անկասկած, դա թուլության նշան է, սակայն հաջողությունը ... հանդես է գալիս որպես չափազանց մեծ կարևորություն ունեցող օպերատիվ գործոն»²²:

Դաշվի առնելով վերը նշվածը՝ կարելի է առաջադրել ազգային անվտանգություն-զարգացում համակարգի ստեղծման հետևյալ մեխանիզմը՝

1. ազգային շահերի հիերարխիայի մշակում.
 - կենսական
 - կարևոր
 - սահմանային:
2. Նշվածի հիման վրա ազգային անվտանգության ռազմավարության մշակում:
3. Անվտանգության ռազմավարության հիման վրա ազգային զարգացման հայեցակարգի մշակում, որը ենթադրում է ազգային գերակայությունների մշակում և այս գերակայությունների հիման վրա ազգային նպատակների ձևակերպում, վերջիններիս դասակարգում, հիերարխացում,

դրանց իրականացման մեխանիզմների (օպերացիոնալացում) մշակում:

Ազգային գերակայությունները հանդես են գալիս հանրային, քաղաքական և ազգային կոնսենսուլի արդյունքում և կարող են ձևակերպվել որպես տեսլական:

Չափազանց անհրաժեշտ է, որպեսզի ազգային նպատակները հստակ դասակարգվեն՝

- մոտակա, հեռակա,
- ստրատեգիական, տակտիկական, օպերատիվ,
- աշխարհաքաղաքական, տարածաշրջանային, քաղաքական, ռազմական, տնտեսական, սոցիալական ոլորտներին վերաբերվող նպատակներ (կարծում ենք, որ հոգևոր ու մշակութային ոլորտների խորությունը և դրանց ձևակերպումը դարերի ավանդույթների հիման վրա դժվարացնում են ստրատեգիական պլանավորման խնդիրը):

Շահերի հիերարխիան, նպատակները և գերակայությունները առաջին քայլն են ռազմավարության մշակման և պլանավորման գործընթացի համար: Ներկայումս կան բազմաթիվ մեթոդներ, որոնք կրիտարկվեն հետագայում:

4. Ազգային անվտանգության մեթոդաբանական հիմքերը

Որպես ազգային անվտանգության մեթոդաբանական հիմք կարող են հանդես գալ համակարգային, ինչպես նաև սիներգետիկայի տեսությունները, որոնք հնարավորություն կտան համակողմանիորեն ուսումնասիրել խնդրո առարկան և մշակել համալիր հայեցակարգ:

Չափազանց կարևոր նշանակություն է ստանալու համեմատական վերլուծական մեթոդ՝ հատկապես այլ երկրների փորձը ուսումնասիրելու համար:

Հայաստանի տարբեր քաղաքական ու հասարարական ուժերի մոտեցումների և դիրքորոշումների վերհանման նպատակով խիստ կարևոր են լինելու խորացված հարցազրույցները Հայաստանի, Ղարաբաղի և Սփյուռքի պետական, քաղաքական, մասնագիտական և հասարակական կառույցների ներկայացուցիչների հետ:

Լուրջ ուշադրություն պետք է դարձնել տարածաշրջանային և համաշխարհային գործընթացների աշխարհաքաղաքական և ռազմական վերլուծությանը:

Բուն մշակման գործընթացը ենթադրում է նպատակների և խնդիրների հիերարխիացում, այդ խնդիրների կառուցվածքայնություն և դրանց իրականացնան պրակտորական վերլուծություն: Խիստ անհրաժեշտ է, որ ազգային անվտանգության հայեցակարգի մշակմանը մասնակցեն մասնագետներ տարբեր ոլորտներից, այսինքն՝ այն պետք է լինի համարյալ: Սակայն, միաժամանակ, առաջնությունը պետք է ստանան միջազգայնագիտական, քաղաքագիտական և նոր ձևավորվող սեբյուրիտարաբանական մեթոդները:

5. ՀՀ ազգային անվտանգության եւ ազգային զարգացման հրամայականները

5.1 Ազգային անվտանգության հիմնախնդիրի ռազմավարական վերլուծությունը

ՀՀ ազգային անվտանգության ապահովման մեխանիզմների ստեղծումը ենթադրում է ժամանակակից մեթոդների կիրառմամբ ռազմավարական վերլուծություն: Այս տեսանկյունից առաջնային է ՀՀ նկատմամբ արտաքին աշխարհի կողմից սպառնալիքների և հնարավորությունների վերլուծությունը: Այս վերլուծության ընթացքում ՀՀ ազգային անվտանգության հիմնախնդիրը պետք է դիտարկվի վերը նշված լայն սահմաննան տեսանկյունից:

Ներկայումս առավել հիմնախնդրային են ռազմական, տնտեսական, սոցիալական, քաղաքական և տեղեկատվական սպառնալիքները: Մրանք մասամբ ունեն արտաքին, մասամբ՝ ներքին բնույթը:

Ռազմական սպառնալիքը Հայաստանի Հանրապետության համար ակտուալ է հանդիսանում, քանի դեռ վերջնականապես լուծված չէ Ղարաբաղի խնդիրը, և Թուրքիայի կառավարությունը, քաղաքական կառույցները և հասարակությունը ՀՀ-ն դիտարկում են ոչ բարիրացիական տեսանկյուններից (ճամուլից ստացված վերջին հաղորդագրությունների համաձայն, Թուրքիայի գլխավոր շտաբը և, հետևաբար, անվտանգության խորհուրդը, Հայաստանը դիտարկում են որպես Թուրքիան շրջապատող «սպառնալիքի գոտու» մի հատված և քաղաքական պլաններ են մշակվում այդ գոտին վերացնելու համար): Թուրքական իշխանությունների բազմաթիվ հակահայկական հայտարարությունները, ինչպես նաև Թուրքիայի ծգտումը՝ լինել տարածաշրջանային ռազմավարական գործող անձ, Հայաստանի համար պոտենցիալ սպառնալիք է պարունակում: Զուտ ռազմական ուժի տեսանկյունից ՀՀ-ի գինված ուժերը, կարծում են, այսօր ունակ են դիմակայելու Հարավային Կովկասի մյուս երկու հանրապետությունների բանակներին, և հաղթող լինելու մարտական գործողությունների ընթացքում: Սակայն մեր տարածաշրջանային հարող պետությունների, հատկապես թուրքական բանակի հետ բախման հեռանկարը կարող է կործանարար լինել, եթե ՀՀ ռազմական պոտենցիալը չբազմա-

պատկվի դիվանագիտական գործողություններով: Ռազմական սպառնալիքը բավականաչափ լուրջ բնույթ է կրում, քանի որ զուտ կազմակերպչական տեսանկյունից ՀՀ բանակն ունի բավականաչափ մեծ ռեսուրսներ, սակայն Հայաստանի Հանրապետության ռազմավարական ռեսուրսները, որոնք թույլ կտան ռազմական գործողությունների երկարաձգման դեպքում կազմակերպել բանակի և հասարակության մատակարարումը, մյուս երկրների համեմատությամբ բավականաչափ սուլ են:

Սա նշանակում է, որ եթե մոտակա 10-15 տարիների ընթացքում Հայաստանի Հանրապետությունը կարողանա պահպանել զինված ուժերի զարգացման ներկայիս տեմպերը, ռազմական հարձակման սպառնալիքը կմնա բավականաչափ ակտուալ:

Քաղաքական տեսանկյունից ՀՀ ազգային անվտանգության նկատմամբ սպառնալիքները ունեն և ներքին, և արտաքին բնույթ: Արտաքին բնույթի սպառնալիքներից առավել կարևորը Թուրքիայի կողմից Հայաստանի Հանրապետության շրջափակումն է և հակահայկական դիվանագիտական գործողությունները միջազգային կազմակերպությունների շրջանակում:

Սակայն առավել վտանգավոր է դառնում Հայաստանում քաղաքական և կառավարող էլիտայի կողմից լեգիտիմության կորուստը, ժողովրդական լայն զանգվածների կողմից իշխանության մարմիններին օժանդակության նվազումը: Պատմական զարգացման տեսանկյունից խոշորագույն սպառնալիք է ազգային իշխանության օժանդակության բացակայությունը ժողովրդական լայն զանգվածների կողմից: Իշխանությունը, որպես երնո-հոգեբանական և ինստիտուցիոնալ երևույթ, կարող է ունենալ աջակցության տարբեր մակարդակներ, սակայն իշխանությունը որպես երնոհոգեբանական երևույթ՝ պատմական զարգացման տեսանկյունից առավել մեծ աջակցության կարիք է գգում, քան իշխանության մարմինները՝ որպես ինստիտուտ: Մեր տարածաշրջանի փորձը ցույց է տալիս, որ երեք խոշոր հարակից պետությունները՝ Թուրքիա, Իրան և Ռուսաստան, գոյություն ունեն որպես երնոհոգեբանական երևույթի լեգիտիմացման բարձր մակարդակ: Եվ այստեղ կարևոր դերը պատկանում է նաև քաղաքական էլիտային և քաղաքական էլիտայի ստեղծմանը Հարավային Կովկասի երեք հանրապետություններում:

ՀՀ քաղաքական անվտանգության հիմնախնդիրը կարելի է դիտարկել

երկու տեսանկյունից:

1. բնական ինքնապաշտպանության ինքնապահովման մեխանիզմներ ստեղծելու համակարգի ունակությունը, որոնք աշխատում են ինչպես ռացիոնալ-գիտակցական-կազմակերպչական մակարդակով, այնպես էլ՝ ենթագիտակցական և, երբեմն, իռացիոնալ մակարդակով: Ըստ էության, խոսքը քաղաքական համակարգի ներքին ինունային ենթահամակարգի ստեղծման մասին է, ինչն իրականացվում է քաղաքական համակարգի և քաղաքական էլիտայի կողմից օրինաստեղծ գործունեության, ինստիտուտների ստեղծման և քաղաքական մշակույթի ժողովրդավարացման միջոցով:

2. Անվտանգության մարմինների՝ որպես առաջացող սպառնալիքներն օպերատիվ մակարդակով վերացնելու կամ կանխարգելելու մեխանիզմ:

ՀՀ-ն, որպես անցումային երկիր, քախվում է վերափոխումների շրջանին հատուկ բոլոր սպառնալիքներին: Այս սպառնալիքների վերացումը քաղաքական անվտանգության տեսակետից բախվում է երկու հիմնախնդրի: Դեմոկրատական քաղաքական համակարգի ոչ լիակատար ձևավորվածություն և անվտանգության մարմինների աշխատանքի յուրահատկության վերաբերյալ ոչ հստակ պատկերացումներ քաղաքական էլիտայի շրջանակներում: Սա նշանակում է, որ անցումային և երրորդ աշխարհի երկրներին հատուկ ձևով ՀՀ քաղաքական էլիտայի այս կամ ներկայացուցիչներ կամ խմբեր փորձում են անվտանգություն ապահովող կառուցները մասամբ օգտագործել իշխանական պայքարի համար: Նման երևույթ, ըստ էության, չի նկատվում արևմտյան երկրներում: Այս մոտեցումն ստիպում է անվտանգության մարմիններին՝ իրենց ուժերի և ռեսուրսների մի մասն օգտագործել քաղաքական էլիտայի որոշ խմբերի քաղաքական նպատակների իրականացման համար՝ սպառելով առանց այն էլ սուլ միջոցները:

Նշվածը հատուկ է ոչ միայն Հայաստանին: Անցումային պետություններում դա արտահայտվում է առավել բացահայտ ու կոշտ ձևով և կպակասի ժողովրդավարական համակարգի ձևավորմանը համընթաց: Սակայն այն առավել մեծ սպառնալիք է Հայաստանի Հանրապետության համար, քանի որ արտաքին ճնշումը ՀՀ քաղաքական համակարգի ինունիամակարդին առաջադրում է առավել կոշտ պահանջներ և՝ քաղաքական կառուցների ստեղծման ու անվտանգության ռազմավարության մշակման,

իրականացման և՝ օպերատիվ գործողությունների նկատմամբ: Յայսատանի Յանրապետության քաղաքական անվտանգությունն այսօր պահանջում է, համադրյալ դիտարկելով անվտանգությունը որպես երևույթ, տեսնել արտաքին և ներքին քաղաքական անվտանգությունների փոխկապակցվածությունը և կենտրոնացնել բոլոր ռեսուրսները վերջինիս ապահովման համար:

Մենք կարող ենք առաջարկել վերլուծական մոտեցում՝ այն ներկայացնելով սխեմայի ձևով, որի սկզբունքները մշակվել են ռուսալեզու գիտական գրականության մեջ: Դրանով հստակեցվում են քաղաքական համակարգի և անվտանգության մարմինների գործառույթները ներքին քաղաքական ապակայունացման և արտաքին սպառնալիքի դեպքում: Մենք կարող ենք մատրիցային կառուցվածքով գրաֆիկորեն ներկայացնել օպերատիվ և համակարգաստեղծ գործողությունների հարաբերակցությունը (տե՛ս գծ. 1):

Տեքստային տարրերակով ունենում ենք հետևյալ սխեման, որը բաղկացած է երեք հիմնական մասից՝

1. քաղաքական իրավիճակը և սպառնալիքները,
2. քաղաքական ինստիտուտների և էլիտային խմբավորումների դերը,
3. անվտանգության մարմինների գործողությունները:

Սցենար 1

Քաղաքական համակարգում նկատվում են հակակառավարական և բողոքի առանձին դրսերումներ, որոնք կարող են ուժային բնույթ ստանալ և փոխվել հակապետական գինված գործողությունների:

Սցենար 1

Գծագիր 1

Իրավիճակի նկարագիր	
<p>Քաղաքական համակարգում նկատվում են հակակառավարական և բողոքի առանձին դրսերումներ, որոնք կարող են ուժային բնույթ ստանալ և փոխվել հակապետական գինված գործողությունների:</p> <p>Անվտանգության մարմիններ</p> <p>Անվտանգության մարմինները փորձում են տեղեկություն ստանալ իրավիճակի մասին, ընտրել առավել ֆլուկտուացիոն կետերը և առաջին աստիճանի պատրաստության բերել կարգի պահպանան մեխանիզմները:</p>	<p>Քաղաքական էլիտա</p> <p>Քաղաքական ինստիտուտները և էլիտան կարող են ակտիվ բանակցությունների, հակամառությունների պատճառների վերհանման և լուծման, հանրային, երկխոսության միջոցով փորձել լուծել խնդիրը՝ համընթաց աշխատելով պատճառների վերացման ուղղությամբ:</p>

Քաղաքական ինստիտուտները և էլիտան կարող են ակտիվ բանակցությունների, կոնֆլիկտների պատճառների վերհանման և լուծման, հանրային երկխոսության միջոցով փորձել լուծել խնդիրը՝ համընթաց աշխատելով պատճառների վերացման ուղղությամբ:

Անվտանգության մարմինները փորձում են տեղեկություն ստանալ իրավիճակի մասին, ընտրել առավել ֆլուկտուացիոն կետերը և առաջին աստիճանի պատրաստության բերել կարգի պահպանան մեխանիզմները:

Սցենար 2

Սկսվում են բախումներ սոցիալական տարրեր խավերի, քաղաքական ուժերի, իշխանության և ժողովրդի միջև, որոնք ստանում են ուժային բնույթը:

Քաղաքական էլիտան անց է կացնում ակտիվ գործողություններ իրավիճակի արմատական բարելավման, ժողովրդական պահանջների հիման վրա քաղաքական բարեփոխումների իրականացման, քաղաքական համակարգի առանձին ինստիտուտների լիակատար վերափոխման ուղղությամբ: Անվտանգության մարմինները կիրառում են ուժային մեթոդներ՝ օգտագործելով սահմանադրությանը իրենց վերապահված բռնության մեջանորիի իրավունքը՝ կատեցնելու համար ուժային հակամարտության վերածած քաղաքական հակամարտությունը:

Սցենար 3

Քաղաքական բողոքների և ուժային գործողությունների արդյունքում քաղաքական համակարգը սկսում է կործանվել:

Քաղաքական էլիտան և քաղաքական ինստիտուտները փորձում են կասեցնել քաղաքական համակարգի կործանումը՝ արմատականորեն փոխելով այն, միաժամանակ ձգտելով ձեռք բերել հնարավորինս մեջ ուսուրսներ և «քաղաքական նիշա»՝ նոր քաղաքական համակարգի ստեղծման դեպքում ամուր դիրքեր ունենալու համար: Անվտանգության մարմինները փորձում են հնարավորինս նվազեցնել հանրությանը հասցելիք վնասը, պահպանել այն հիմնական մեխանիզմները, որոնք անհրաժեշտ են լինելու հետագայում ազգային անվտանգության ապահովման համար, քանի որ քաղաքական համակարգի փոփոխությունը չի նշանակում հանրությի լիովին կործանում:

Ինչպես երևում է, քաղաքական անվտանգության ապահովման համար հիմնական դերը պատկանում է քաղաքական էլիտային և քաղաքական ինստիտուտներին: Եթե քաղաքական էլիտան չի կարողանում իր դերը կատարել և անվտանգության ապահովման ընթացքում հիմնական դերը հատկացնում է անվտանգության մարմիններին, ապա դա կարող է միայն կարճաժամկետ արդյունք ունենալ:

1996թ. դեպքերը Հայաստանի Հանրապետությունում, երբ, փաստորեն, քաղաքական էլիտան ՀՀ ներքին անվտանգության ապահովումը վերապահեց անվտանգության մարմիններին՝ ինքը մնալով հասարակական խավերի հետ բախման ընթացքում պասսիվ դերակատար, ապացուցում են, որ քաղաքական համակարգում ուժերի փոփոխության հետևանքով համակարգի որոշակի փոփոխություններ պարտադիր կերպով տեղի ունեցան: Չափազանց հետաքրքիր է այն փաստը, որ այս դեպքերից անց մոտավորապես 1 տարի անց, քաղաքական երկու խոշոր ուժերը՝ և իշխանական, և ընդդինադիր, այնքան թուլացան, որ պառակտվեցին, և մի քանի տարի հետո, ըստ էռության, դարձան «երկրորդական խաղացողներ» Հայաստանի քաղաքական դաշտում:

Սա ևս մեկ անգամ ապացուցում է, որ ՀՀ-ում ժողովրդավարության կայացման ճանապարհին ներքին քաղաքական անվտանգության ապահովման համար անվտանգության մարմինների կամ ուժային մարմինների դերն ու նշանակությունը առավել չափով կրում է օպերատիվ բնույթ, իսկ հիմնական մեխանիզմը քաղաքական էլիտայի գործողություններն են և քաղաքական ինստիտուտների գործառնությունը:

Հայաստանի Հանրապետությունում քաղաքական անվտանգության կարևորագույն խնդիրը ընտրությունները և ընտրությունների միջոցով լեգիտիմ իշխանության ձևավորումն է: Ընտրությունների ընթացքում գեղձարարությունները և բազմաթիվ խախտումները երկու սպառնալիք են ստեղծում ազգային անվտանգության համար՝

1. դրանք խաբարում են ժողովրդավարության՝ որպես առավել ընդունելի ռեժիմի և ընտրությունների՝ որպես այդ ռեժիմի կառուցման հիմնական մեխանիզմի շուրջ հանրային կոնսենսուսը.

2. կոպտորեն խախտում են մարդու քաղաքական իրավունքները՝ առաջացնելով հականարտություն հասարակության և ձևավորվող իշխանության միջև:

Հայաստանի քաղաքական էլիտայի այն շրջանակները, որոնք իշխանության են գալիս ընտրակեղծիքների հիման վրա, նախ իրենք են դառնում հանրային հականարտության աղբյուր՝ նախ կայունացնելով իրավիճակը, և երկրորդ՝ վերը նշված սցենարների առկայության դեպքում չեն կարողանում կատարել լայն առունով անվտանգության իրենց վերապահված դերը և անվտանգության ապահովումը հիմնականում փոխանցում են ուժային կառույցներին, ինչի արդյունքի մասին արդեն նշվեց:

Հայաստանի Հանրապետության ժողովրդավական անվտանգության նկատմամբ այսօր հիմնական սպառնալիք է բնակչության արտահոսքը: Այս արտահոսքը առաջացնում է ոչ միայն քանակական բնույթի (պակասում է բնակչության քվաքանակը), այլև որակական բնույթի հիմնախնդիրներ (փոփոխում է հասարակության մեջ տարբեր խավերի հարաբերակցությունը, աշխատող և չաշխատող անձանց, ակտիվ և պասսիվ մարդկանց, կառավարման հակվածություն ունեցող և չունեցող անհատների հարաբերակցությունը, և որ չափազանց կարևոր է տղամարդկանց ու կանանց տոկոսային հարաբերակցությունը):

Տվյալ հիմնախնդիրը և աշխարհում գլոբալացմանը ուղեկցող երևույթը (որը հատուկ է ոչ միայն մեր երկրին) միաժամանակ պատմամշակութային բնույթը է կրում:

Արտագաղթը՝ որպես ազգային անվտանգության սպառնալիք, Հայաստանի համար առավել հաշվարկելի է դաշնում, երբ ուսումնասիրում ենք Հարավային Կովկասի մյուս երկու հանրապետություններից տեղի ունեցած արտագաղթը և Հայաստանում բարիքներ ստեղծող ու պետական օժանդակության կարիք գգացող անձանց հարաբերակցությունը: Եթե ճիշտ են արևմտյան և ռուսական մի շարք աղբյուրների տվյալները, որոնց համաձայն Աղրբեջանից վերջին տարիներին արտագաղթել է 3.5-ից 3.5 մլն մարդ, որինցից միայն 700 հազարն են այլազգի, ապա կարող ենք համարել, որ հայ-աղրբեջանական հարաբերություններում Հայաստանից տեղի ունեցած արտագաղթը ներկա պահին լրջագույն քանակական սպառնալիք չի ստեղծում Հայաստանի համար: Սակայն կան երկու այլ հիմնախնդիրներ:

1. Հայաստանում և Աղրբեջանում բնակչության վերարտադրության հարաբերակցությունը (որն ի նպաստ Հայաստանի չէ),

2. ապագա տնտեսական զարգացման հիմնական ուղղությունները

(Եթե Աղրբեջանը զարգանալու է նավթի և գազի արտահանման ուղղությամբ, ինչը մարդկային խոշոր և բարձր որակավորում ունեցող կաղրերի պահանջ չի առաջադրում, ապա Հայաստանի զարգացումը, որը պետք է տեղի ունենա բարձր տեխնոլոգիաների հիման վրա, առաջին հերթին տվյալ պահանջն է առաջադրում: Այլ կերպ ասած՝ Եթե Աղրբեջանը զարգանալու է նավթային և գազային ռեսուրսների, ապա Հայաստանը զարգանալու է մարդկային ռեսուրսների հիման վրա):

Տեղեկատվական անվտանգության հիմնախնդիրն առավել քան լուրջ է Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության համար: Դա բխում է Հայաստանում ինֆորմացիոն և հեռահաղորդակցման տեխնոլոգիաների զարգացման գերակայությունից, ինչպես նաև այն փաստից, որ Եվրոպական Միությունը Հարավային Կովկասի զարգացման խնդրում կատարել է դերերի բաշխում, որի համաձայն՝ Վրաստանում պետք է զարգանան բնապահպանական տեխնոլոգիաների արտադրությունը, Աղրբեջանում էներգակիրների արտադրությունը, իսկ Հայաստանի Հանրապետությունում տեղեկատվական և հեռահաղորդակցման տեխնոլոգիան ու էներգետիկան: Հայաստանի Հանրապետության զարգացումն այս ոլորտում իսկապես ճեծ հեռանկարներ ունի, ինչը պայմանավորված է կրթական բարձր մակարդակով, ավանդույթներով, հակվածությամբ, առկա ինֆրաստրուկտուրայով և, վերջապես, շրջափակմամբ ու տարածաշրջանում մեր աշխարհաքաղաքական դիրքով: Տեղեկատվական և հեռահաղորդակցման տեխնոլոգիաների զարգացումն այն կարևորագույն կետերից է, որտեղ հատվում են ազգային անվտանգության և ազգային զարգացման վեկտորները: Ուստի, այս ոլորտում անհրաժեշտ է իրականացնել համալիր գործունեություն: Սակայն այսօր ոլորտի զարգացումը բախվում է մի շարք բարդ խնդիրների հետ, որոնք սպառնալիք են ստեղծում Հայաստանի զարգացման համար: Այս հիմնախնդիրներն են՝

- պետական իշխանության մարմինների ոչ բավարար ուշադրությունը,
- կարերի պատրաստման և վերապատրաստման համակարգի ոչ բավարար հզորությունը,

- ֆինանսների պակասը,
- «Արմենտելի» մենաշնորհը:

Ինչպես հայտնի է, ներկայում ինտերնետում ընթանում է «Վիրտուալ» կամ տեղեկատվական պատերազմ Հայաստանի և Աղրբեջանի միջև: Այս

պատերազմում Հայաստանը դեռևս ամուր դիրքեր ունի՝ ի տարրերություն ԶԼՄ-ների միջոցով իրականացվող պատերազմի, որտեղ մենք երբեմն պարտություն ենք կրում: Սակայն իրավիճակն արդեն Հայաստանի Հանրապետության համար ոչ դրական միտումներ է ստանում: Մասնավորապես, ցուցանիշ է այն փաստը, որ, ըստ որոշ տվյալների, Աղրբեջանում «հակերների» (կոնյուտերային հանցագործների) տոկոսը, որոնք վերահսկում են պետության կողմից, ավելի մեծ է, քան ՀՀ-ում, և այդ տարբերությունը գնալով ավելանում է: Ինֆորմացիոն պատերազմի մեջ հակերների գործունեությունն ուղղված է հակառակորդ երկրի կառավարման համակարգի և կոնյունիկացիոն ենթակառուցվածքների ոչնչացմանը:

5.2 ՀՀ անվտանգության և զարգացման գերակայությունները

Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության և զարգացման գերակայությունները փոխկապակցված են: Կարելի է ասել, որ Հայաստանի Հանրապետության համար ազգային զարգացումը հանդես է գալիս որպես ազգային անվտանգության հիմք: Եվ այս տեսանկյունից ազգային անվտանգության ու ազգային զարգացման մի շարք գերակայություններ համանման են:

Ազգային անվտանգության գերակայություններն են՝

- ռազմարդյունաբերական համակարգի ստեղծումը և պաշտպանական համակարգի գերակայությունը (բանակի անընդհատ զարգացում և արդիականացում, ռազմական ինֆրակառուցվածք, ռազմական գիտելիքի զարգացում, արտադրական հզորությունների մեծացում և այլն),

- հզոր և գործունակ դիվանագիտական համակարգ, որի ռեսուրսները պետք են կենտրոնացվեն ռազմական անվտանգության մակարդակի բարձրացման, ՀՀ քաղաքական աջակցության և ռազմավարական ներդրողների ներգրավման ուղղությամբ, ինչպես նաև աշխարհի ուժային կենտրոններում տեղեկատվության հավաքում-վերլուծություն-ազդեցություն մեխանիզմի ստեղծում և «աշխատեցում»,

- արտաքին հետախուզության հզոր համակարգի ստեղծում,
- գործունակ քաղաքական էլիտայի ծևավորում և ռեկրուտավորման մեխանիզմների ստեղծում,
- ամուր և գործուն քաղաքական ինստիտուտներ,

• ժողովրդավարության իրական և երկարաժամկետ մեխանիզմների ստեղծում,

• ներքին համաձայնության մթնոլորտի կերտում և հանրության ներսում ճեղքածքների հնարավորինս վերացում,

• սոցիալական և տնտեսական զարգացման մեխանիզմների ստեղծում,

• պերմանենտ զարգացման ապահովում:

Անհրաժեշտ է հաշվի առնել, որ Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգությունը և զարգացումը մեջ չափով կախված են մեր տարածաշրջանում ունեցած դիրքից և դերից: Քանի որ ներկայումս աշխարհի միակ գերտերություն հանդիսացող ԱՄՆ-ի արտաքին քաղաքականությունը մշակվում և իրականացվում է «տարածաշրջանացման» սկզբունքի հիման վրա, ապա Հայաստանի գործողությունները ռեգիոնում փոխկապակցված մեխանիզմի ստեղծման և այդ համակարգի շրջանակներում սեփական որոշիչ դերը հիմնարար նշանակություն են ստանում: Հայաստանի գործողությունները պետք է հիմնվեն հետևյալ սկզբունքի հիման վրա.

Տարածաշրջանային քաղաքական անվտանգության և զարգացման համակարգում ՀՀ-ի դերը պետք է լինի այնպիսին, որ ՀՀ-ի շահերի ոտնահարմանը ուղղված յուրաքանչյուր գործողություն կամ ՀՀ-ի թուլացումը սպառնալիքներ է առաջացնելու տարածաշրջանի մյուս պետությունների կենսական շահերի իրականացման համար:

Այլ կերպ ասած, անհրաժեշտ է լինելու ստեղծել մի համակարգ, երբ ցանկացած հարված հանրապետությանը առաջացնելու է ոչ միայն Հայաստանի, Սփյուռքի ու միջազգային կազմակերպությունների հակադարձությունը, այլև ապակայունացնելու և ապակազմակերպելու է տարածաշրջանային անվտանգության ու զարգացման անբողջ համակարգ՝ մեր հարևան երկրների համար ստեղծելով կենսական սպառնալիքներ:

Սրանք հիմնական սկզբունքային կետերն են, որոնց իրականացումը դեռևս նախապայմաններ կստեղծի միայն ազգային անվտանգության և զարգացման համալիրի ստեղծման համար:

5. 3 Իրավական և ինստիտուցիոնալ բազա

Հայաստանի Հանրապետությունում ազգային անվտանգության իրամայականները պարտադրում են իրավական և ինստիտուցիոնալ բազայի ստեղծում: Բավականաչափ հետաքրքիր է այն փաստը, որ իրավական բազայի ստեղծումը որոշակիորեն գալիս է անվտանգության տարբեր ոլորտների ապահովման հրամայականներից: Այլ կերպ ասած՝ օրենսդրական ակտերը վերաբերում են անվտանգության ապահովման այս կամ ոլորտներին, որոնք կոնկրետ կարգավորման անհրաժեշտություն ունեն:

Առավել ընդհանուր ռազմավարական հիմնարար փաստաթղթերը, ինչպիսիք են ազգային անվտանգության դոկտրինը, ազգային անվտանգության ռազմավարությունը, արտաքին քաղաքականության դոկտրինը, ազգային զարգացման ռազմավարությունը և դոկտրինը, տնտեսական անվտանգության դոկտրինը, ըստ Էռլյան, մինչ այժմ մշակված չեն: Առանձին փորձեր են կատարվում որոշակի առաջընթաց ապահովելու համար, սակայն հիմնախնդիրը հրատապ է մնում մինչ այժմ: Պատճառները կարող են բազմաթիվ լինել: Օրինակ՝

1. Հայաստանում ռազմավարական մշակույթի բացակայություն, որն անդրադարձում է ռազմավարական պլանավորման արժեքավորման վրա:

2. Քաղաքական էլիտայի հակվածությունը իրավիճակային լուծումների և տակտիկական գործողությունների պլանների միջոցով պետության կառավարումն իրացնելու հակումը:

3. Մեր երկրի թուլությունը և փոքր չափսերը, ինչը Հայաստանը առավել մեջ կախվածության մեջ է դնում արտաքին աշխարհի ազդեցությունից՝ պարտադրելով արձագանքել միջազգային քաղաքական համակարգի պահանջներին:

4. Երկրի ծանր սոցիալ-տնտեսական իրավիճակը և հասարակական լայն խավերի մտահոգությունը բացառապես հանապազրյա հաց ձեռքբերելու հիմնախնդրով:

5. Քաղաքական ինստիտուտների, մասնավորապես՝ կուսակցությունների թույլ կայացումը, ինչը քաղաքական համակարգում «հոսունություն» է առաջացնում և այլն:

Սակայն նշված հիմնախնդիրների առկայությունը չի պակասեցնում ազգային անվտանգության և զարգացման ոլորտի ռազմավարական պլանավորման և կառավարման հրամայականը:

Օրենսդրական և ինստիտուցիոնալ բազայի ստեղծումը ՀՀ-ում հնարավորություն կտա առավել կարգավորելու հրավիճակը: Այսօր ՀՀ-ում ազգային անվտանգության համակարգի գործառնությունն առավել չափով օրենսդրորեն կարգավորված է անվտանգության մարմինների և ուժային կառույցների գործունեության ոլորտներում: Կան օրենսդրական ակտեր, որոնք վերաբերում են ոստիկանության աշխատանքին («Ոստիկանության մասին օրենքը»), պետական գաղտնիքին («Պետական գաղտնիքի մասին օրենքը»), սահմանների պաշտպանությանը, զինվորական ծառայությանը և բանակի գործառնությանը, ներքին անվտանգությանը և այլն:

ՀՅ ազգային անվտանգության համակարգի գոյության համար կարևորագույն նշանակություն են ստանում մի շարք միջազգային պայմանագրեր և համաձայնագրեր, որոնք վերաբերում են տարածաշրջանային և հավաքական անվտանգությանը, միջազգային անվտանգությանը, այլ երկրների հետ փոխադարձ ռազմական օժանդակությանը և այլն: Օրինակ, Ռուսաստանի հետ կնքված մոտ 60 միջպետական պայմանագրերի հիմնական մասը կա'մ ուղղակիրեն վերաբերում է անվտանգության և փոխադարձ օգնության խնդիրներին, կա'մ մեծ չափով անդրադառնում է վերջիններին (մասնավորապես՝ «Մեծ պայմանագիրը»):

Ընդհանուր կարգավորման բնույթի օրենքները, որոնք վերաբերում են ազգային անվտանգությանը, ըստ էության, երկուսն են՝ «ՀՅ անվտանգության մասին» և «ՀՅ անվտանգության հայեցակարգի հիմնական դրույթների մասին» օրենքները: Երկրորդ օրենքը, որը դեռևս շրջանառվում է Ազգային ժողովում, չափազանց կարևոր, սակայն միաժամանակ լիովին չնշակված փաստաթուղթ է: Այդ է վկայում հետևյալ փաստը. ազգային անվտանգության հրամայականների շարքում ռազմական անվտանգությունը չի գրավում առաջնային դիրք: Որքան էլ ներկայիս աշխարհը լինի փոխներթափակնեցված, որքան էլ ազգային անվտանգության ապահովման համար ոչ ռազմական մերուները և միջոցները աշխարհի տարբեր երկրների արտաքին քաղաքական դոկտրիններում առաջնային նշանակություն ունենան, աշխարհը շարունակում է մնալ ուժային հարաբերակցու-

թյան և կոչտ մրցակցության, ինչպես նաև ռազմական հակամարտությունների թատերաբեմ: Անհրաժեշտ է պարզորոշ հասկանալ, որ ազգային անվտանգությանը վերաբերող փաստաթղթերում տարբեր ոլորտների ամրագրումը ըստ հերթականության վերջիններիս հիերարխիկ նշանակություն է տալիս:

Օրինաստեղծ գործունեությունը ՀՅ-ում կարող է ընթանալ երկու փոխլրացնող ուղղություններով.

1. Օրենքները գրվում են առաջացած հիմնախնդիրներին լուծումներ տալու համար և ուղղակի արձագանք են արտաքին աշխարհին ներկայացվող պահանջներին:

2. Օրենքները և իրավական հիմնարար փաստաթղթերը մշակվում և ստեղծվում են՝ հաշվի առնելով ապագա զարգացումները և նպատակ ունենալով, ազդելով այդ զարգացումների վրա, մասամբ կառավարել ապագան:

Այս երկու մոտեցումներից որևէ մեկի առանձին կիրառումը չի կարող ապահովել պետության զարգացում երկարաժամկետ տեսանկյունից: Անհրաժեշտ է դառնում երկուսի համադրությունը, որը կարող է հանդես գալ որպես երրորդ ուղղություն: Միաժամանակ անհրաժեշտ է հաշվի առնել, որ Հայաստանի երրորդ Հանրապետությունը կայացման իր առաջին տարիներին ժամանակ չուներ զբաղվելու ռազմավարական պլանավորման հիմնախնդիրներով: Սակայն 1994 թվականից արդեն հնարավորություն էր ստեղծվել աշխատել ՀՅ քաղաքական համակարգի ձևավորման և զարգացման պլանավորմամբ, մասնավորապես՝ ազգային անվտանգության համակարգի «օրենսդրական և ինստիտուցիոնալ կառուցմանը»: Դա, ըստ էության, չարվեց, ինչպես այդ, այնպես էլ հետագա տարիներին, ինչը, փաստորեն, ստեղծեց չափազանց բացասական ավանդությը:

Ներկայումս առավել հրատապ է դարձել ազգային անվտանգության ռազմավարության մշակումը: Սակայն սա չպետք է իրականացվի մի շարք պատգամավորների կողմից, որոնք չնայած ունեն խորհրդարանական գործունեության ու օրինաստեղծ աշխատանքի փորձ, սակայն չեն կարող լիովին մշակել և ներկայացնել «Ազգային անվտանգության ռազմավարությունը»՝ որպես համալիր փաստաթուղթ:

Այս փաստաթղթի ստեղծումը ենթադրելու է գործողությունների համա-

Լիր, որը պետք է ներառի երեք հիմնական քայլ՝

1. ուսումնասիրություններ և մշակումներ,
2. քննարկումներ և կոնսենսուս,
3. փորձաքննություն և որոշման ընդունում՝ համաձայնության հիման վրա:

Ըստ երթյան, առաջին քայլը պետք է լինի համազգային դիմուրսի (քազմախոսության) սկսումը, որին պետք է մասնակցեն մասնագետներ և տեսաբաններ, անվտանգության մարմինների և պետական գերատեսչությունների ներկայացուցիչներ, հիմնական քաղաքական ուժերի և որոշ հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ: Բավականաչափ կարևոր է հայեցակարգի ստեղծումից առաջ սոցիոլոգիական հարցումների միջոցով վերհանել, թե Հայաստանի Հանրապետությունում, ըստ հասարակական կարծիքի ընկալման, ինչ է ազգային անվտանգությունը, որոնք են ազգային անվտանգության հիմնական գերակայությունները, որոնք պետք է լինեն ազգային զարգացման նպատակները: Այս հարցումը հնարավորություն կստեղծի ծնավորել Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության տեսլականը, ինչպես նաև ազգային զարգացման հիմնական ուղղությունների վերաբերյալ պատկերացումները: Տվյալ կերպով հնարավոր է դառնալու մասամբ լուծել ազգային զարգացման ոլորտում պետական իշխանության մարմինների կողմից իրականացվելիք գործողությունների լեգիտիմության հիմնախնդիրը, որի պակասն այսօր սպառնալիք է դարձել և անվտանգության, և զարգացման համար: Ստեղծված փաստաթուղթը չպետք է լինի զուտ գաղափարների և մոտեցումների համալիր և չպետք է խեղաթյուրվի: Նաև մակերեսային սահմանման չպետք է ենթարկվի ազգային անվտանգության հասկացությունը և երևույթը, ինչպես դա, ցավոք, տեղի է ունենում ազգային գաղափարախոսության երևույթի հետ, եթե որոշ տեսաբաններ ազգային առանձին գաղափարների և գերակայությունների ուղղակի համադրությունը դիտարկում են որպես ազգային գաղափարախոսություն, չընկալելով այն փաստը, որ ազգային գաղափարախոսությունը շատ ավելի բազմաբնույթ, խորը պատմա-հոգեբանական, երբեմն առասպելայնացված բնույթ ունի և ծնավորվում է դարերի ընթացքում, այլ ոչ թե ստեղծվում է մի շարք մտավորականների կոլեկտիվ աշխատանքի շնորհիվ:

Ազգային անվտանգության հայեցակարգի և ռազմավարության հիման

վրա արդեն անհրաժեշտ է լինելու մշակել ՀՀ արտաքին քաղաքական, ՀՀ ազգային զարգացման ռազմավարությունները: Ընդ որում, Հայաստանի համար անհրաժեշտ է հաշվի առնել, որ մեր երկորի համար ազգային անվտանգության հիմնախնդիրները մեծ չափով պայմանավորվելու են ազգային զարգացմամբ:

Ազգային անվտանգության հիմնարար փաստաթուղթը հիմնականում ուղղված են լինելու ստեղծել Հայաստանի և հայ ժողովողի ազգային անվտանգության տեսլականը: Այսինքն՝ այն, փաստորեն, հանդես է գալիս լայն առունուվ ՀՀ քաղաքական համակարգի ունակությունը՝ ստեղծելու անվտանգության համակարգ, որը կծառայի ոչ միայն Հայաստանի անկախ պետության նկատմամբ առկա սպառնալիքների չեզոքացմանը երկարաժամկետ տեսանկյունից, այլև որոշակիորեն կապահովի Ղարաբաղի և Սփյուռքի անվտանգության ապահովման կոորդինացիան: Օպերատիվ գործունեության տեսանկյունից պետք է ստեղծվի իրավական բազա, որը հնարավորություն կտա անվտանգության մարմիններին՝ անմիջապես արձագանքել առաջացող սպառնալիքներին: Միաժամանակ սահմանափակելով վերջիններիս հնարավորությունները ազգային անվտանգության դեմ պայքարի իրամայականը օգտագործելու մարդու իրավունքների խախտման և պետական գործունեության նկատմամբ սեփական վերաբերյան համար: Հայաստանում արդեն իսկ ընդունված և հետագայում ընդունվելիք փաստաթուղթը պետք է պարունակեն առանձին հոդվածներ, կամ դրանք ամբողջությամբ պետք է ուղղված լինեն արտաքին և ներքին անվտանգությունների նկատմամբ սպառնալիքների վերացմանը: Կարելի է թվարկել այն հանցագործությունների խնճերը, որոնք սպառնալիք են ստեղծում անվտանգության համար:

Ներքին անվտանգություն

- իշխանության զավթում կամ իշխանության պահպանում ուժի միջոցով.
- գինված խռովություն.
- սահմանադրական կարգը բռնությամբ փոփոխելու հասարակական կոչեր և գործողություններ.
- պետական գործչի կյանքի նկատմամբ ոտնձգություններ:
- Արտաքին անվտանգություն
- պետական դավաճանություն.

- լրտեսություն,
- պետական գաղտնիքի հրապարակում,
- պետական գաղտնիք պարունակող փաստաթղթերի կորուստ:

Հայաստանում անվտանգության ոլորտի ապահովման կոորդինացիոն հիմնական մարմին է հանդես գալիս նախագահին կից գործող անվտանգության խորհուրդը: Ի տարբերություն այլ երկրների, նույնիսկ Խորայելի, Վերջինիս գործունեությունը բավականաչափ փակ է, ինչը հնարավորություն չի ընձեռում բավականաչափ տեղեկատվություն ունենալ վերլուծության համար:

Այն փաստը, որ ներկայունս անվտանգության խորհրդի քարտուղար է հանդիս գալիս պաշտպանության նախարար Սերժ Սարգսյանը, որոշակիորեն ելնում է նաև Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության գերակայությունների հիերարխիայուն ռազմական անվտանգության առավել կարևոր նշանակությունից:

Բաց տվյալների վերլուծության հիմնան վրա (մամուլ) այն տպավորությունն է ստեղծվում, որ անվտանգության այնպիսի խոշորագույն բաղկացուցիչ, ինչպիսին արտաքին, ռազմական, քաղաքական և տնտեսական հետազոտությունն է, բավարար ուշադրության չի արժանանում ՀՀ պետական իշխանության մարմինների կողմից: Ներքին անվտանգության համակարգի ամրապնդումը կարևորագույն խնդիր է, սակայն, ինչպես բազմից նշել ենք, Հայաստանի Հանրապետության համար արտաքին ռազմական և քաղաքական սպառնալիքներն այսօր գերակայող են, ինչը պարտադրում է ուղղակիորեն հզորացնել ռազմական, քաղաքական և տնտեսական հետախուզության մեխանիզմները: Ինստիտուցիոնալ տեսանկյունից սրանք կարող են լինել համապատասխան գերատեսչության ներսում, սակայն անվտանգության խորհրդի կողմից նրանց գործունեությունը պետք է կոորդինացվի ռեսուրսների խնայողական օգտագործման համար, իսկ մրցակցությունը պետք է պահպանվի ռացիոնալ բավարարության մակարդակի վրա, որպեսզի՝

1. բացառվի աննպատակ և կոչտ մրցակցությունը վերջիններիս միջև (Խորայելի փորձը ցույց է տվել, որ այդպիսի մրցակցության արդյունքում կարող են տապալվել մշակված գործողություններ, հակառակորդը կարող է ջախջախել հետախուզական ցանցը և կարող են, ինչն առավել էական է, գոհվել մարդիկ):

2. բացառվի այդ գերատեսչությունների անթույլատրելի փոխմիավորումը, ինչը վերջիններիս վերահսկողությունը կարող է հաստատել քայլաքական մարմինների վրա:

Անհրաժեշտ է հաշվի առնել, որ ՀՀ ազգային անվտանգության համակարգի կոորդինացիոն մարմինների դերն ու նշանակությունը ոչ միայն Հայաստանի և նրա ազգաբնակչության անվտանգության ու զարգացման ապահովումն է, այլև Սփյուռքի և Ղարաբաղի մեր հայրենակիցների անվտանգության ու զարգացման հրամայականների իրականացումը: Ընդհանրապես, այս ոլորտի կոորդինացումը պարտադիր է իրականացնել՝ դիտարկելով Հայաստան-Ղարաբաղ-Սփյուռք եռամիասնական մեխանիզմը որպես մեկ համակարգ, ինչը հնարավորություն է ընձեռելու ամբողջական մոտեցում ցուցաբերել հայ երնոսի ազգային անվտանգության և զարգացման ապահովմանը:

Կոորդինացիոն մարմինների տեսանկյունից, ամենայն հավանակությամբ, հնարավոր չի լինի ստեղծել մեկ ընդհանուր մարմին՝ այս կամ այն պետության անվտանգության խորհրդների նմանությամբ: Սակայն կարելի է ձևավորել կոորդինացիոն մեխանիզմներ, որոնք հիմնված կլինեն՝

1. գրավոր համաձայնագրերի,
2. բանավոր համաձայնությունների,
3. ինֆորմացիոն ընդհանուր համակարգի,
4. պրակտիկ աշխատանքային մեխանիզմների վրա:

Այսինքն՝ տվյալ դեպքում խոսքը կարող է լինել ոչ թե ֆորմալացված հայկական համազգային անվտանգության ընդհանուր կոորդինացիոն պաշտոնականացված կառույցի ստեղծման մասին, այլ կոորդինացիոն ցանցի ստեղծման մասին, ինչը, ըստ եռթյան, համապատասխանում է այսօրվա կառավարման տեսության պահանջներին:

5.4. Հայաստան-Ղարաբաղ-Սփյուռք եռամիասնական անվտանգության և զարգացման համալիր

Ներկայումս Հայաստանի, Ղարաբաղի, Սփյուռքի միջև համագործակցությունը և քաղաքականության կոորդինացիան զարգացում են ապրում: Կա բավականաչափ մեծ առաջընթաց 90-ական թվականների համեմատությամբ: Սա արդյունքն է՝

- ՀՅ-ի կենտրոնական իշխանության մարմինների դիրքորոշումների և վարած քաղաքականության.

- Յայ հեղափոխական դաշնակցության և Ռամկավար ազատական կուսակցության ինտեգրմանը ՀՅ քաղաքական կյանքին.

- Ղարաբաղի քաղաքական գործիչների ներկայացվածության ՀՅ պետական կառավարման մեջ.

- Յայրենիք-Սփյուռք-Ղարաբաղ միասնականությանն ուղղված միջոցառումների իրականացման.

- Սփյուռքի գործարարների առջև ՀՅ և ԼՂՀ տնտեսական դաշտերի առավել ազատականացման:

Սակայն այսօր կան բազմաթիվ խնդիրներ, որոնց լուծումը պահանջում է ավելի բարդ կազմակերպչական գործողություններ: Այդ խնդիրներն են՝

1. համահայկական անվտանգության ընդհանուր հայեցակարգի մշակումը,

2. հայ ժողովրդի զարգացման և ազգային մրցունակության հայեցակարգի մշակումը,

3. ռազմավարական պլանների մշակման ընդհանուր մեխանիզմների ստեղծումը,

4. ինֆորմացիայի փոխանակման հստակ գործող համակարգի ստեղծումը («Համահայկական ինտերնետ»),

5. համաշխարհային և ներայական իրադարձություններին արագ արձագանքնան օպերատիվ ոչ ֆորմալ համակարգի ստեղծումը:

Այս բոլոր հիմնախնդիրների լուծումն այսօր առաջին հերթին պահանջում է աշխարհի տարբեր ծայրերում հայերի կողմից ընդունվող քաղաքական, տնտեսական, կրոնամշակութային ոլորտների որոշումների համապատասխանեցում: Նշվածը կարող է իրականացվել սիներգիզմի սկզբունքի հիման վրա: Սա նշանակում է, որ ցանկացած դեպքում հայ ժողովրդի ներկայացուցիչները տարբեր երկրներում պետական իշխանության և տեղական կառավարման մարմիններում, մանուլում, բանկերում, ձեռնարկություններում, հասարակական կազմակերպություններում մասնակցելով ցանկացած որոշման, որն այս կամ այն կերպ առնչվում է հայ ժողովրդի գոյությանը և կենսագործունեությանը, պետք է իր սեփական մոտեցումները հնարավորինս համապատասխանեցնի այլ տեղերում գործող մեր հայրենակիցների մոտեցումներին: Բացի պրակտիկ նշանակու-

թյունից, սիներգիստական մոտեցումը քաղաքական որոշումների ընդունման ժամանակ կնպաստի հայ էթնոսի ինքնագիտակցության, ազգային ինքնության զարգացմանը:

Անհրաժեշտ մեխանիզմների ստեղծման ընթացքում պետք է ներգրավվեն ինչպես ՀՅ պետական իշխանության մարմիններ, մասնավորապես՝ արտաքին գործիչների նախարարություն, ֆինանսների և էկոնոմիկայի նախարարություն, առևտի և տնտեսական զարգացման նախարարություն, պաշտպանության նախարարություն և հետախուզական գերատեսչություններ, մի շարք մարզեր, այնպես էլ ոչ կառավարական կազմակերպություններ Յայաստանում, Սփյուռքում և Ղարաբաղում, կուսակցություններ, գործարարներ, կրթության և գիտության ոլորտի ներկայացուցիչներ: Որպես կանոն, մեծարիկ մարդկանց և կառույցների ներգրավումը կոնկրետ հիմնախնդիրների լուծման և մեխանիզմների ստեղծման գործընթացում դժվարություններ է հարուցում, մասնավորապես, կապված համաձայնեցման մեխանիզմների բարդության, կոմունիկացիայի դժվարության և աշխատանքային ընթացակարգերի պահպանան հետ: Այդ իրավիճակում նպատակահարմար է դառնում աշխատանքային գործունեությունը համակարգ-ենթակարգ և «շենքի կառուցում» սկզբունքը հիման վրա: Միներգետիկայի սկզբունքի կիրառումը համահայկական անվտանգության համալիրի մշակման և «աշխատեցման» ընթացքում բավականաչափ կիեշտանա, եթե կարողանանք արդյունավետ կերպով կիրառել հեռահաղորդակցման և ինֆորմացիոն ժամանակակից տեխնոլոգիաները: Դրա համար անհրաժեշտ է.

- ՀՅ-ում ոչ թե դեկարատիվ կերպով, այլ իրականում օժանդակել այս ոլորտների զարգացմանը.

- հնարավորինս արագ, օգտագործելով բոլոր օրինական միջոցները, վերացնել «Արմենտելի» մենաշնորհը այս ոլորտում.

- Վորձել չեզոքացնելով գլոբալացման վտանգը հայ ժողովրդի՝ որպես ոչ մեծ էթնոսի համար, ակտիվորեն օգտագործել այնպիսի կարևորագույն մեխանիզմ, ինչպիսին համաշխարհային ինֆորմացիոն հասարակությունն է և ինտերնետը.

- ակտիվորեն աշխատել՝ զարգացնելու համար համահայկական ինտերնետը.

- Յայաստանում և Ղարաբաղում ստեղծել համակարգչային հզոր են-

թակառուցվածքներ.

- արդեն այսօր սկսել աշխատել պետական մակարդակով ՀՀ-ում ինֆորմացիոն և հեռահաղորդակցման զարգացման իրական հայեցակարգերի ստեղծման ուղղությամբ.

- սկսել ՀՀ տեղեկատվական անվտանգության հայեցակարգի նշակումը:

Այս տեխնոլոգիաները, փաստորեն, հնարավորություն են ստեղծում կապ հաստատել տարբեր երկրների մեր հայրենակիցների հետ, և տեխնոլոգիական զարգացման տվյալ հնարավորությունից չօգտվելը նշանակում է այսօր արդեն սպառնալիք ստեղծել ապագայուն հայ ժողովրդի անվտանգության համար:

Հայրենիք-Դարաբաղ-Սփյուռք եռամիասնական համակարգի անվտանգության և զարգացման ապահովման գործում կարևորագույն դեր և նշանակություն է ստանուն Հայաստանի Հանրապետությունը, որը օղակ-ներից միակն է, որ միավորում է ներքին և արտաքին լծակները: Հայաստանի զարգացումը «լոկոնտիվի» դեր է ունենալու և Դարաբաղի, և Սփյուռքի զարգացման ու հզորացման համար: Ապագայում ՀՀ-ի և ԼՂՀ-ի միավորման արդյունքում Հայրենիք-Սփյուռք հարաբերությունները կամրապնդեն և կստանան նոր որակ: Իսկ ներկայումս անհրաժեշտ է, գիտակցելով Հայաստանի «լոկոնտիվային» դերը, ստեղծել հայ ժողովրդի երեք հատվածները միավորող համակարգի ռեսուլսների փոխլրացման մեխանիզմ, որի բաղկացուցիչ մասերից մեկը կարող է դաշնալ, օրինակ, այսպես կոչված՝ «աշխատանքի բաժանումը» կողմերի միջև: Ոչ ուղղակի աղբյուրների վերլուծությունը ցույց է տալիս, որ վերջինս այսօր միայն մասամբ գոյություն ունի:

Օգտագործված գրականություն

5. **T. Гоббе,** Сочинения В 2т. М., 1991, Т2, 129:
7. **В. И. Ярочкин,** Безопасность информационных систем "Ось- 89". М., 1996, նույնի՝ Секьюритология "Ось- 89" М. 2000, նույնի՝ Концепция безопасности комерческого предприятия ИПКИР, М., 1996:
8. **Лесков М. А.,** Гомеостатические процессы и теория безопасности, Безопасность, N4, М., 1994, с.66:
9. **О.А. Колобов,** Запад: Новые измерения национальной и международной безопасности. Нижний Новгород, 1997:
10. **Trager F., Simone F.** An Introduction to the Study of National Security //National Security and American Society: Theory, Process and Policy. Ed by **Trager F. Kronenberg P. Lawrence**, University of Kansas Press, 1973, Р. 36:
11. **NSC 68 The spécial collections.** File Presidential Directives on National Security from Truman to Clinton. us National Security Archive:
12. **A. Jordan, W. Taylor.** American National Security: Policy and Processe. Baltimor, 1981, Р. 61:
13. Satiment on the Defence Estimates 1988. London, 1988, V:
14. Mitterrand F. Refflexion sur la politique extérieur de la France P 1986, Р. 20:
15. Франция: Военно-политический курс в 80-ые годы, Военная политика стран Западной Европы, ИНИОН, М., 1989:
16. **Bjorn Moller Guerilla** Strategies and Non-offensive Defence, Working papers C, 1991, N4, р.3:
17. **Ben -Gurion D.** Israel: Years of challenge p. 188-211; О. А Колобов, А А. Корнилов, А.С. Макаричев, А.А Сергунин- Процесс принятия внешнеполитических решений. Н.Н. 1992, с. 24-25:
18. **François Dieo.** Le maintien de L'Ordre. Une mission de défense. Défense national Décembre 1994 P. 6:
19. **Eric Dénécé.** Pour un conseil national de sécurité. Défense national Novembre 1995 P. 29:
20. **Morgentau H.** Another Great- Debat: The national Interest of the United States// American Political Science Review. V XLVI 1952 p. 973:
21. A Safe and prosperous America AUS Foreign and Defenc Policy Blueprint. Ed by Holmesk Wash The Heritage Foundation 1993 p. 7:

«ՆՈՐԱՎԱՆՔ» ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ ՀԻՄՍԱԴՐԱՄԻ ՆՊԱՏԱԿՆԵՐՆ ՈՒ ԱՆԵԼԻՔՆԵՐԸ

Ժամանակակից աշխարհում սեփական ներուժի առավելագույն կենտրոնացումը, տարածաշրջանային և համաշխարհային հավասարակշռության համակարգերում կուտակված էներգիայի ռացիոնալ և նպատակային կիրառումը դառնում է ազգերի և պետությունների առջև ծառացած կենսական հիմնահարցեր:

Հայաստան այսօր միջազգային ասպարեզում նրգունակ չէ բնական ռեսուրսների, տնտեսական ընդհանուր վիճակի, ֆինանսական համարդարված կարողականության չափորոշիչներով: Փոխսրբն հայկական գործոնն ուշագրավ և շահավետ դիրք է գրավում մտավոր ներուժի կարողականության կուտակման իմաստով: Մտավոր ներուժի կուտակման և ռացիոնալ կիրառման հիմնահարցը բանալի է հայ ժողովրդի՝ ժամանակակից աշխարհում սեփական անբողջական ներուժի գնահատման, տեղի ու դերի, հնարավորությունների հստակեցման համար: Համահայկական կազմակերպված մտավոր ներուժը կոչված է դառնալու այն հզոր լծակը, որը Հայաստանին հնարավորություն կտա տեղ գրավել համաշխարհային գործնթացների վրա ազդելու կարողականություն ունեցող երկրների քվում:

Այսպիսով անհրաժեշտություն է դառնում հայկական շարունակականության նորելի մշակումը, որը հայ ժողովրդի անբողջական պոտենցիալի պահպանման ու զարգացման ծրագիրն է և իր առանձին բաղադրիչներով օրգանապես շաղկապված անբողջություն է: Իրավիճակը և առաջիկա զարգացումների հրամայականն առաջնահերթ են դարձնում հիշյալ հիմնահարցը իրականացնելու կոչված, սկզբունքային առումով որակապես նոր միավորի ստեղծման անհրաժեշտությունը: Այդպիսին կարող է դառնալ «Նորավանք» գիտակրթական հիմնադրամը, որն իրենից ներկայացնելու է գիտական, մշակութային, հոգևոր ներուժի կազմակերպման, համադրման, կառավարման և գործնական կիրառման մեխանիզմների մշակման կենտրոն:

Համաշխարհային փորձն ունի նմանատիպ կառույցների արդյունավետ աշխատանքի բազմաթիվ օրինակներ: Բաղադրակրթական նրգակցության

արդի փուլ զարգացած շատ երկրներ (Անգլիա, Ֆրանսիա, ԱՄՆ, ԳՖՌ, ճապոնիա, Իրան, Չինաստան) թևակոյսում են տասնամյակների, երբեմն հարյուրամյակների պատմություն ունեցող այդպիսի հաստատություններով: Այս կենտրոնների վրա են դրվում պետության մտավոր ներուժի կազմակերպման, նորագույն գիտական մշակումների օգտագործման, գիտական կառավարման տեխնոլոգիաների մշակման, պետական ու հասարակական կյանքի բոլոր բնագավառներում դրանց կիրառմանը, կադրերի պատրաստման և վերապատրաստման գործառությները:

Այսպիսի հաստատությունների ձևավորման և արդյունավետ գործունեության հարուստ փորձ ունի նաև հայ ժողովուրդը: Պատմական շրջադարձային փուլերում, երբ առավել ցայտուն, երբեմն ավերիչ էին դրսուրվում քաղաքակրթությունների շիման և փոխազդեցությունների գործընթացները, ի հայտ եկան Նորավանքի, Սանահինի, Գլաձորի, Տաթևի, Սոխ համալսարանները՝ որպես մտավոր ներուժի պահպանման, հոգևոր և մշակութային արժեքների հավաքման, կուտակման և վերարտադրման ազգային գենոֆոնի հետագա զարգացումն ապահովող կենտրոններ:

Հիմնադրամի հիմնական առաքելությունն է լինելու դառնալ այն փորձարական կենտրոնը, որտեղից հայ իրականության ամենատարբեր ոլորտներ պետք է ձգվեն հայոց շարունակականությունն ապահովող ծրագրերն ու դրանց իրականացման մեխանիզմները: Այն միաժամանակ վեր է ածվելու միջազգային գիտահետազոտական և մտավոր կենտրոնի, որն ունակ կլինի արժանիորեն ներկայացնել մեր ժողովրդին համաշխարհային հանրությանը, դառնալով բաղադրակրթությունների լավագույն ձեռքբերուների համադրման և երկխոսության վայր:

Համալսարանի դասախոսներն ու սաները միջնադարի հայ ուսուցչապետների օրինակով կդառնան հայկական ազգային նոր դպրոցի հիմնադիրներ, որոնք անկախ պետականության պայմաններում կլուծեն գլոբալ ներազդեցություններով թելադրված նոր խնդիրներ և առաջադրանքներ:

ՀԻՄՍԱԴՐԱՄԻ ԳՈՐԾՈՒԽԵՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՆԵՐԸ

Հիմնադրամն իրականացնելու է հետևյալ հիմնական գործառությները:

- գիտական մտքի համախմբում,
- գիտահետազոտական գործունեություն,

- ռազմավարական հետազոտությունների իրականացում,
- մասնագետների պատրաստում և վերապատրաստում, կրթամեթոդական նոր մեխանիզմների մշակում և տարածում, տեղեկատվական ցանցի ստեղծում:

ա) Գիտական մտքի համախմբումը ներառում է հետևյալ խնդիրները՝

- համապատասխան մթնոլորտի ձևավորում, հանրապետության և արտերկրի առաջատար մտավորականների համախմբում, գիտական նորագույն մշակումների փոխանակում,
- գիտական կոնֆերանսներ, խորհրդակցություններ, քննարկումներ,
- գիտա-քաղաքական հետազոտություններ:

բ) Գիտահետազոտական հայեցակարգային աշխատանքներ՝

- պետության նպատակների և իրական հնարավորությունների գնահատում, զարգացման մոդելների ձևավորում,
- գործադաշտերի և գործամիջոցների հստակեցում,
- հայ ժողովողի մարդկային, նյութական և հոգևոր կարողության «գույքագրում» չօրս միջոցներով՝ մարդկային, կազմակերպական, ֆինանսական և հոգևոր (մշակութային, քաղաքակրթական),
- հասարակության միասնության մոդելի կառուցում, որի հիմքում կը նկնջեն տարբեր գաղափարական, քաղաքական, սոցիալ-տնտեսական, կրոնական, մշակութային ուղղվածություն ունեցող միավորների գործունեության համակարգումը և հասարակական համաձայնության առկա հիմնախնդիրների հստակեցումը,
- հետազոտությունների արդյունքների կիրառման մեխանիզմների ճշտում,
- կոնկրետ արդյունքների գործադրման առաջարկությունների ներկայացում:

գ) Ռազմավարական հետազոտությունների իրականացում՝

- ռազմավարության և առաջնահերթությունների ճշտում,
- կոնկրետ նպատակներ հետապնդող ծրագրերի մշակում,
- տարբեր ոլորտներում գործող ծրագրերի և նրանց գործադրման ժամանակացույցների համադրման մեխանիզմների ձևավորում,
- մարտավարական նշանակության խնդիրների առանձնացում և դա-

սակարգում,

- յուրաքանչյուր ծրագրի ենթատեքստում հնարավոր հանախոհ և հակադիր ուժերի տեղաբաշխման քարտեզի կազմում և գործունեության մեխանիզմների ճշգրտում,
- պետական անվտանգության բոլոր չափումներից բխող հատուկ ծրագրերի մշակում, վերջինիս արդյունքում պետական պատվերի մշակում և իրականացման մեխանիզմների ճշգրտում,
- պետական կառավարման օպտիմալ համակարգերի մոդելավորում:

դ) Կրթամեթոդական աշխատանքներ և տեղեկատվական ցանցի ստեղծում՝

- հիմնադրամի իրականացրած հետազոտությունների հիման վրա մեթոդաբանական աշխատանքների իրականացում,
- դասախոսների և ուսանողների վարժանքի (training) ծրագրերի իրականացում,
- կրթական նոր մեխանիզմների մշակում և տարածում գիտակրթական հաստատություններում,
- տարբեր ոլորտների մասնագիտական կադրերի պատրաստում և վերապատրաստում,
- տեղեկատվական-քարոզական ցանցի հայեցակարգի մշակում,
- քարոզական համադրման մեխանիզմների ձևավորում,
- համալսարանի իրականացրած աշխատանքների մատուցում հանրությանը,
- հանրությանը մատչելի գրադարանի, համակարգային ծրագրերի ստեղծում,
- գիտական նորագույն մշակումներին հանրության ծանոթացում:

ԴԻՍԱՐԱՍԻ ԱՊԱԶԻԿԱ

ԱՇԽԱՏԱՍՔՆԵՐԻ ԴԻՍԱԿԱՆ ՈՒՂՈՌԹՅՈՒՆՆԵՐԸ

«Նորավանք» գիտակրթական հիմնադրամի գիտական ուսումնասիրությունների ոլորտը կարելի է բնութագրել որպես հայագիտություն, որի բովանդակությունը արդի փուլում էապես ընդլայնվել է, ներառելով միշարք հասարակական գիտությունների (սոցիոլոգիա, քաղաքագիտու-

թյուն, պատմություն, փիլիսոփայություն, ազգագրություն, մշակութաբանություն, հոգեբանություն և այլն) հատույթուն գտնվող հարցադրումներ և դրանց համապատասխան լուծումներ: Եթե անցյալում հայագիտության ուղղվածության վեկտորն ուղղված էր դեպի անցյալը, ապա ներկայունս սուր անհրաժեշտություն է զգացվում վեկտորի սլաքն ուղղել պատասխան: Բացի այդ, առաջանում է հայագիտության բովանդակային նոր վեկտոր՝ միտված համակարգված մարտահրավերներին համարժեք պատասխաններ գտնելուն:

Անկախ պետականության պայմաններում հասարակության մեջ աստիճանաբար ձևավորվել է անհրաժեշտություն պարզաբանել, թե որո՞նք են մեր ազգային շահերը, նպատակները, առաջնահերթությունները 21-րդ դարում, ինչպիսի՞ ռազմավարություն և մարտավարություն է պահանջվում նրանց պաշտպանության համար երկրի ներսում և միջազգային ասպարեզում:

Այս իրողությամբ է պայմանավորված իիմնադրամի գիտական ուսումնասիրությունների թեմաների առաջնահերթությունը: Որպես իիմնական ընտրվեցին երկու փոխկապակցված հիմնախնդիրներ՝

ա. Հայկական գործոնի ձևավորումը 21-րդ դարում

բ. Ազգային և պետական անվտանգության համալիր հայեցակարգ

«Հայկական գործոնի ձևավորումը 21-րդ դարում» թեման ներառում է խետևյալ խնդիրների շրջանակը՝

• արդի գլոբալ գործընթացները և ազգային պետության գործառությունները,

• ազգային շահեր, նպատակներ, առաջնահերթություններ. Էռլեյուն, բովանդակություն,

• հայկական շարունակականության հայեցակարգը,

• ազգային և պետական շահ ընթանումների փոխհարաբերակցությունը,

• ազգային պետությունը, քաղաքացիական հասարակությունը և ժողովրդավարությունը,

• ազգային համաձայնության և միասնականության գաղափարը որպես ազգային պետության ներքին կայունության և զարգացման գրավական, վերջինիս հասարակական, քաղաքական, տնտեսական, հոգևոր և

մշակութային ռեսուրսները,

• Հայոց Ցեղասպանության ճամաչումը և Պահանջատիրությունը որպես հայկական գործոնի կարևորագույն բաղադրամասեր,

• Հայունիք-Սփյուռք առնչությունների մողելավորման իիմնախնդիրները,

• Սփյուռքի ազգապահպաննան գործոնները և հայոց անկախ պետականության գործառությները,

• ՀՀ արտաքին քաղաքականության և ռազմական դոկտրինայի հիմնադրությները,

• ազգային պետության կառուցման տնտեսական հիմնավորումները,

• գիտակրթական և մշակութային քաղաքականությունը որպես ազգային պետության ձևավորման կարևորագույն բաղադրամաս,

• անկախ պետականության զարգացման ուղիներն ու հեռանկարները 21-րդ դարում:

«Ազգային և պետական անվտանգության համալիր հայեցակարգ» թեման ներառում է խնդիրների խետևյալ շրջանակը.

• ազգային անվտանգության համալիր ծրագրի հիմնադրույթները,

• հագեցորդարոյական անվտանգության հիմնադրույթներ,

• մշակութային անվտանգության հիմնադրույթներ,

• կրթական-դաստիարակչական անվտանգության հիմնադրույթներ,

• գիտատեխնիկական անվտանգության հիմնադրույթներ,

• տնտեսական (ֆինանսական) անվտանգության հիմնադրույթներ,

• կոնունիկացիոն անվտանգության հիմնադրույթներ,

• տեղեկատվական անվտանգության հիմնադրույթներ,

• բնապահպանական անվտանգության հիմնադրույթներ,

• ժողովրդագրական անվտանգության հիմնադրույթներ,

• առողջապահական անվտանգության հիմնադրույթներ,

• սահմանամերձ շրջանների անվտանգության հիմնադրույթներ:

«Նորավանք» գիտակրթական հիմնադրամի հոգաբարձուների խորհուրդ՝

Անդրանիկ Սարգսյան - ՀՀ Կարչապետ

**Մանուկ Թոփուզյան - ՀՀ կառավարության աշխատակազմի
ղեկավար-նախարար**

**Կարինե Կիրակոսյան - ՀՀ կառավարության աշխատակազմի
ղեկավար-նախարարի տեղակալ**

Լևոն Մկրտչյան - ՀՀ Կրթության և գիտության նախարար

**Տիգրան Սարգսյան - ՀՀ Կենտրոնական բանկի նախագահ
Արա Ավետիսյան - ՀՀ Կրթության և գիտության նախարարի տեղակալ**

Իրավաբանական հասցե՝

Երևան-10, Կառավարական տուն, 1

Գրասենյակի հասցե՝

Երևան, Գարեգին Նժդեհի, 23

Հեռ. 44-04-72, 44-04-73

Ֆաքս (374 1) 44-04-73

E-mail: noravank@arminco.com